# *[ՎԱՐՉԱՇՐՋԱՆԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ]

# Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգ Շահառուի ձեռնարկ

**[Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջան հասցե, քաղաք, Կալիֆոռնիայի փոստային դասիչ]**

Հրատարակման ամսաթիվ՝ 2022 թ[1]

Այս ամբողջ փաստաթղթում տեքստը խմբագրվել է՝ նշելու համար, թե որտեղ է թարմացվել կամ վերանայվել ձեռնարկի լեզուն՝ ինչպես նշված է հետևյալում.

- Ավելացված տեքստը նշվում է կրկնակի աստղանիշով ():
- Աստղանիշին նախորդող տեքստն այն է, որտեղ վարչաշրջանը պետք է ավելացնի իր տեղեկատվությունը (*):

[1] Ձեռնարկը պետք է տրամադրվի այն ժամանակ, երբ շահառուն առաջին անգամ է օգտվում ծառայություններից:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ..... 3**

**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... 8**

**ԻՆՉՊԵՍ ՍՏԱՆԱԼ DRUG MEDI-CAL-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԱՌԱՔՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... 23**

**ԻՆՉՊԵՍ ՍՏԱՆԱԼ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... 28**

**ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ ..... 29**

**ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ..... 31**

**ՆՊԱՍՏԻ ՄԱՍԻՆ ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՈՐՈՇՄԱՆ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ ..... 35**

**ԽՆԴԻՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ ..... 40**

**ԴԺԳՈՀՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ..... 43**

**ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ (ՍՏԱՆԴԱՐՏ ԵՎ ԱՐԱԳԱՑՎԱԾ) ..... 46**

**ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԱՐԴԱՐ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑ ..... 53**

**ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ CALIFORNIA ՆԱՀԱՆԳԻ MEDI-CAL ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ ..... 58**

**ԲԺՇԿԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ ԵՎ ԼԻԱԶՈՐԱԳԻՐ ..... 61**

**ՇԱՀԱՌՈՒԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... 63**

**ԽՆԱՄՔԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ ..... 68**

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

## Շտապ օգնության ծառայություններ

Շտապ օգնության ծառայություններն աշխատում են օրը 24 ժամ և շաբաթը 7 օր: Եթե կարծում եք, որ դուք շտապ բժշկական օգնության կարիք ունեք, զանգահարեք 911 կամ օգնության համար գնացեք մոտակա շտապ օգնության բաժանմունք:

Շտապ օգնության ծառայություններն այն ծառայություններն են, որոնք տրամադրվում են առողջությանը սպառնացող անսպասելի բժշկական վիճակի դեպքում, ներառյալ առողջությանը սպառնացող հոգեբուժական վիճակը:

Առողջությանը սպառնացող վիճակն առկա է, երբ դուք ունեք ախտանիշեր, որոնք առաջացնում են ուժեղ ցավ կամ լուրջ հիվանդություն կամ վնասվածք, որը խելամիտ ոչ մասնագետը (ուշադիր կամ զգուշավոր ոչ բժշկական անձը) կարծում է, ողջամտորեն ակնկալում է, որ առանց բժշկական օգնության կարող է՝

- Լուրջ վտանգի ենթարկել ձեր առողջությունը, կամ
- Եթե հղի եք, լուրջ վտանգի տակ դնել ձեր կամ չծնված երեխայի առողջությունը, կամ
- Լուրջ վնաս պատճառել ձեր մարմնի աշխատանքին, կամ
- Լուրջ վնաս պատճառել մարմնի որևէ օրգանի կամ մասի:

Դուք իրավունք ունեք շտապ օգնության անհրաժեշտության դեպքում օգտագործել ցանկացած հիվանդանոց: Շտապ օգնության ծառայությունները երբեք թույլտվություն չեն պահանջում:

## Ո՞ւմ հետ կապվեմ, եթե ինքնասպանության մտքեր եմ ունենում:

Եթե դուք կամ ինչ-որ մեկը, ում ճանաչում եք, ճգնաժամի մեջ է, խնդրում ենք զանգահարել ինքնասպանությունների կանխարգելման ազգային հեռախոսագիծ **988** կամ **1-800-273-TALK (8255)** հեռախոսահամարով:
Տեղի բնակիչների համար, ովքեր օգնություն են փնտրում ճգնաժամի ժամանակ և որպեսզի կարողանան մուտք գործել տեղական հոգեկան առողջության ծրագրեր, խնդրում ենք զանգահարել *[վարչաշրջանը պետք է տեղադրի 24-ժամյա ճգնաժամային միջամտության համար(ներ)ը] հեռախոսահամարներով:

**Ինչո՞ւ է կարևոր կարդալ այս ձեռնարկը:**
*[Վարչաշրջանը պետք է տեղադրի ողջույնի հաղորդագրություն նոր շահառուներին, ներառյալ կառավարվող խնամքի հիմնական առանձնահատկությունները և սպասարկման տարածքը, որը ֆինանսավորվում է Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի կողմից:]

Կարևոր է, որ դուք հասկանաք, թե ինչպես է գործում Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի ծրագիրը, որպեսզի կարողանաք ստանալ ձեզ անհրաժեշտ խնամքը: Այս ձեռնարկը բացատրում է ձեր նպաստները և թե ինչպես ստանալ խնամք: Այն նաև կպատասխանի ձեր շատ հարցերին:
Դուք կիմանաք՝

- Ինչպե՞ս ստանալ հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման բուժման ծառայություններ ձեր վարչաշրջանի Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի պլանի միջոցով
- Ի՞նչ նպաստներից կարող եք դուք օգտվել
- Ի՞նչ անել, եթե հարց կամ խնդիր ունեք
- Ձեր իրավունքներն ու պարտականությունները՝ որպես ձեր Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի շահառու

Եթե հիմա չեք կարդում այս ձեռնարկը, ապա պետք է պահեք այն, որպեսզի կարողանաք կարդալ ավելի ուշ: Օգտագործեք այս ձեռնարկը որպես շահառուի

ձեռնարկի հավելում, որը ստացել եք ձեր ընթացիկ Medi-Cal-ի նպաստին գրանցվելիս: Ձեր Medi-Cal-ի նպաստը կարող է կապված լինել Medi-Cal-ի կառավարվող խնամքի պլանի կամ սովորական Medi-Cal-ի «Ծառայություն վճարի դիմաց» ծրագրի հետ:

**Որպես ձեր  Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի ծրագրի շահառու, ձեր Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը պատասխանատու է՝**

- Որոշել, թե արդյոք համապատասխանում եք մատչելիության չափանիշներին Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի ծառայությունների համար վարչաշրջանի կամ նրա մատակարարի ցանցից:
- Համակարգել ձեր խնամքը այլ ծրագրերի կամ առաքման համակարգերի հետ, ըստ անհրաժեշտության, որպեսզի հեշտացնի խնամքի փոփոխումները և ուղեգրով ուղղորդի շահառուներին՝ ապահովելով, որ ուղղորդման օղակը փակ լինի, և նոր մատակարարն ստանձնի շահառուի խնամքը:
- Տրամադրել անվճար հեռախոսահամար, որը պատասխանում է օրը 24 ժամ և շաբաթը 7 օր, որը կարող է պատմել ձեզ, թե ինչպես ստանալ ծառայություններ Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանից: Դուք կարող եք նաև կապվել Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի հետ այս համարով՝ խնդրելով հասանելի լինել աշխատանքային ժամերից հետո:
- Ունենալ բավարար մատակարարներ ձեր կողքին, որպեսզի համոզվեք, որ դուք կարող եք ստանալ հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման բուժման ծառայությունները, որոնք ֆինանսավորվում են Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի կողմից, եթե դրանց կարիքն ունեք:
- Տեղեկացնել և ուսուցանել ձեզ այն ծառայությունների մասին, որոնք առկա են ձեր Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանում:

- Տրամադրել ձեզ ծառայություններ ձեր իսկ լեզվով կամ անվճար թարգմանչի կողմից (անհրաժեշտության դեպքում) և տեղեկացնելով ձեզ, որ այս թարգմանչական ծառայություններն առկա են:
- Ձեզ տրամադրել գրավոր տեղեկատվություն այն մասին, թե ինչն է ձեզ հասանելի այլ լեզուներով կամ ձևաչափերով: *[Վարչաշրջանը պետք է լրացուցիչ տեղեկատվություն տեղադրի շեմային լեզուներով նյութերի, այլընտրանքային ձևաչափերի առկայության, օժանդակ օգնության, ծառայությունների առկայության և այլնի մասին:]
- Սույն ձեռնարկում նշված տեղեկատվության որևէ էական փոփոխության մասին ծանուցագիր տրամադրել փոփոխության՝ նախատեսվող ուժի մեջ մտնելու օրվանից առնվազն 30 օր առաջ: Փոփոխությունը կհամարվի էական, երբ առկա է հասանելի ծառայությունների քանակի կամ տեսակի ավելացում կամ նվազում, կամ եթե կա ցանցի մատակարարների թվի ավելացում կամ նվազում, կամ եթե կա որևէ այլ փոփոխություն, որը կազդի այն նպաստների վրա, որոնք ստանում եք Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի միջոցով:
- Տեղեկացնել ձեզ, եթե որևէ պայմանագրային մատակարար հրաժարվում է կատարել կամ այլ կերպ աջակցել որևէ ֆինանսավորող ծառայության բարոյական, էթիկական կամ կրոնական առարկությունների պատճառով, և տեղեկացնել ձեզ այլընտրանքային մատակարարների մասին, որոնք առաջարկում են փոխհատուցվող ծառայություն:
- Ապահովել, որ դուք շարունակական հասանելիություն ունենաք ձեր նախկին և ընթացիկցանցից դուրս գտնվող մատակարարին որոշակի ժամանակահատվածով, եթե մատակարարների փոփոխությունը հանգեցնի ձեր առողջության վատթարացմանը կամ մեծացնի հոսպիտալացման ռիսկը:

*[Վարչաշրջանը պետք է տեղադրի անվճար հեռախոսահամար *շահառուի ծառայությունների համար, և եթե առկա է առանձին հեռախոսագիծ օգտագործման կառավարման հետ կապ հաստատելու համար, խնդրում ենք ներառել այն այստեղ:]

**Տեղեկատվություն շահառուների համար, ովքեր տարբեր լեզուներով նյութերի կարիք ունեն**

*[Վարչաշրջանը պետք է տեղադրի համապատասխան տեղեկատվությունը:]

**Տեղեկատվություն շահառուների համար, ովքեր դժվարանում են ընթերցել**

*[Վարչաշրջանը պետք է տեղադրի համապատասխան տեղեկատվությունը:]

**Տեղեկատվություն լսողության խանգարում ունեցող շահառուների համար**

*[Վարչաշրջանը պետք է տեղադրի համապատասխան տեղեկատվությունը:]

**Տեղեկատվություն տեսողության խանգարում ունեցող շահառուների համար**

*[Վարչաշրջանը պետք է տեղադրի համապատասխան տեղեկատվությունը:]

**Գաղտնիության գործելակերպի մասին ծանուցագիր**

*[Վարչաշրջանը պետք է տեղադրի համապատասխան տեղեկատվությունը:]

## ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Որո՞նք են Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի ծառայությունները:**

Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի ծառայություններն առողջապահական խնամքի ծառայություններ են այն մարդկանց համար, ովքեր հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարում ունեն կամ, որոշ դեպքերում ենթակա են  հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման զարգացման ռիսկի, որը սովորական բժիշկը չի կարող բուժել: Լրացուցիչ տեղեկատվության համար կարող եք օգտվել սույն ձանուցագրի «Սքրինինգ, կարճ միջամտություն, ուղեգիր բուժման համար և վաղ մանկության ժամանակ միջամտության ծառայություններ» բաժնից: *

Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի ծառայությունները ներառում են.

- Ամբուլատոր բուժման ծառայություններ
- Ինտենսիվ ամբուլատոր բուժման ծառայություններ
- Մասնակի հոսպիտալացման ծառայություններ (առկա են միայն չափահասների համար որոշ վարչաշրջաններում, սակայն անչափահասները կարող են իրավունք ունենալ օգտվել ծառայությունից վաղ և պարբերական սքրինինգի, ախտորոշման և բուժման շրջանակներում՝ անկախ իրենց բնակության վարչաշրջանից)
- Կացության/ստացիոնար բուժման ծառայություններ (ենթակա է վարչաշրջանի նախնական թույլտվությանը)
- Հրաժարման կառավարման ծառայություններ
- Թմրամիջոցների բուժման ծրագրի ծառայություններ
- Դեղորայք կախվածության բուժման համար (MAT)
- Վերականգնողական ծառայություններ

- Փոխօգնության ծառայություններ (առկա են միայն չափահասների համար որոշ վարչաշրջաններում, բայց անչափահասները կարող են իրավունք ունենալ օգտվել ծառայությունից վաղ և պարբերական սքրինինգի, ախտորոշման և բուժման շրջանակներում՝ անկախ իրենց բնակության վարչաշրջանից)
- Խնամքի համակարգման ծառայություններ
- Նոպաների կառավարում (առկա է միայն որոշ վարչաշրջաններում)

Եթե ցանկանում եք ավելին իմանալ Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի ծառայության մասին, որը կարող է հասանելի լինել ձեզ, տեսեք ստորև ներկայացված նկարագրությունները.

Ամբուլատոր բուժման ծառայություններ

- Խորհրդատվական ծառայությունները տրամադրվում են շահառուներին շաբաթական մինչև ինը ժամ չափահասների համար և շաբաթական վեց ժամից պակաս 21 տարեկանից ցածր շահառուների համար, երբ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է: Ծառայությունները կարող են գերազանցել առավելագույն չափը՝ ելնելով անհատական բժշկական անհրաժեշտությունից: Ծառայությունները կարող են տրամադրվել լիցենզավորված մասնագետի կամ հավաստագրված խորհրդատուի կողմից համայնքի ցանկացած համապատասխան հաստատությունում՝ անձամբ, հեռախոսով կամ հեռահար բժշկության միջոցով:
- Ամբուլատոր ծառայությունները ներառում են գնահատում, խնամքի համակարգում, խորհրդատվություն, ընտանեկան թերապիա, դեղորայքային ծառայություններ, կախվածության բուժման դեղորայք ափիոնների օգտագործման հետևանքով առաջացած խանգարման դեպքում, կախվածության բուժման դեղորայք  ալկոհոլի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման դեպքում  և այլ ոչ ափիոնային նյութերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարումներ ունեցողների ուսուցման, վերականգնման ծառայություններ և հոգեմետ դեղերի

օգտագործման հետևանքով առաջացած խանգարման ճգնաժամային միջամտության ծառայություններ:

- [Վարչաշրջան] (համաձայնագրի շրջանակներում բավական մանրամասն ներառեք ցանկացած լրացուցիչ տեղեկատվություն նպաստների չափի, տևողության և ծավալի վերաբերյալ, որպեսզի համոզվեք, որ շահառուները հասկանում են այն նպաստները, որոնց իրավունքն ունեն)

**Ինտենսիվ ամբուլատոր ծառայություններ**

- Ինտենսիվ ամբուլատոր ծառայությունները տրամադրվում են  շահառուներին (նվազագույնը ինը ժամ, շաբաթական առավելագույնը 19 ժամով՝ չափահասների համար, և նվազագույնը վեց ժամ, շաբաթական առավելագույնը 19 ժամով՝ 21 տարեկանից ցածր շահառուների համար), երբ որոշվում է, որ դա բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է: Ծառայությունները հիմնականում բաղկացած են կախվածության հետ կապված խնդիրների վերաբերյալ խորհրդատվությունից և ուսուցումից: Ծառայությունները կարող են տրամադրվել լիցենզավորված մասնագետի կամ հավաստագրված խորհրդատուի կողմից կառուցված միջավայրում: Ամբուլատոր ինտենսիվ բուժման ծառայությունները կարող են տրամադրվել անձամբ, հեռահար բժշկության կամ հեռախոսի միջոցով:
- Ինտենսիվ ամբուլատոր ծառայությունները ներառում են նույն բաղադրիչները՝  ինչ ամբուլատոր ծառայությունները: Ծառայության ժամերի ավելացումն է հիմնական տարբերությունը:
- [Վարչաշրջան] (բավականին մանրամասն ներառեք համաձայնագրի շրջանակում առկա ցանկացած լրացուցիչ տեղեկատվություն նպաստների չափի, տևողության և ծավալի վերաբերյալ, որպեսզի համոզվեք, որ շահառուները հասկանում են այն նպաստները, որոնց իրավունքն ունեն)

**Մասնակի հոսպիտալացումը** (առկա է միայն չափահասների համար որոշ վարչաշրջաններում, բայց անչափահասները կարող են իրավունք ունենալ օգտվել

ծառայությունից վաղ և պարբերական սքրինինգի, ախտորոշման և բուժման շրջանակներում՝ անկախ իրենց բնակության վարչաշրջանից)

- Մասնակի հոսպիտալացման ծառայությունները ներառում են շաբաթական 20 կամ ավելի ժամ կլինիկական ինտենսիվ ծրագրավորում, ըստ բժշկական անհրաժեշտության: Մասնակի հոսպիտալացման ծրագրերը սովորաբար անմիջականորեն առկա են հոգեբուժական, բժշկական և լաբորատոր ծառայություններում և պետք է բավարարեն հայտնաբերված կարիքները, որոնք պահանջում են ամենօրյա մշտադիտարկում կամ կառավարում, սակայն որոնք կարող են պատշաճ կերպով լուծվել կլինիկական ինտենսիվ ամբուլատոր պայմաններում: Ծառայությունները կարող են տրամադրվել անձամբ, համաժամանակյա հեռահար բժշկության միջոցով կամ հեռախոսով:
- Մասնակի հոսպիտալացման ծառայությունները նման են ինտենսիվ ամբուլատոր ծառայություններին, որոնց հիմնական տարբերությունն է ժամերի քանակի ավելացումը և բժշկական ծառայությունների լրացուցիչ առկայությունը:
- [Վարչաշրջան] (համաձայնագրի շրջանակներում բավական մանրամասն ներառեք ցանկացած լրացուցիչ տեղեկատվություն նպաստների չափի, տևողության և ծավալի վերաբերյալ, որպեսզի համոզվեք, որ շահառուները հասկանում են այն նպաստները, որոնց իրավունքն ունեն)

**Կացության բուժումը** (ենթակա է վարչաշրջանի թույլտվությանը)

- Կացության բուժումը ոչ ինստիտուցիոնալ, 24-ժամյա ոչ բժշկական, կարճաժամկետ կացության բուժման ծրագիր է, որը վերականգնողական ծառայություններ է տրամադրում հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման ախտորոշմամբ շահառուներին, երբ որոշվում է, որ դա բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է: Շահառուն պետք է բնակվի այդ տարածքում և պետք է աջակցվի միջանձնային և անկախ կյանքի հմտությունները վերականգնելու, պահպանելու և կիրառելու,

ինչպես նաև համայնքի աջակցության համակարգեր մուտք գործելու նրանց ջանքերում: Ծառայությունների մեծ մասը տրամադրվում է անձամբ, սակայն հեռահար բժշկությունը և հեռախոսը կարող են օգտագործվել նաև ծառայություններ մատուցելու համար, երբ անձը գտնվում է կացության բուժման մեջ: Մատակարարներն ու բնակիչները համագործակցում են, որպեսզի բացահայտեն խոչընդոտներ, սահմանեն առաջնահերթություններ, նպատակներ դնեն և լուծեն հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման խնդիրները: Նպատակները ներառում են ձեռնպահ մնալը, պատրաստվելը ռեցիդիվ հարուցիչներին, անձնական առողջության և սոցիալական գործունեության բարելավումը և շարունակական խնամքի մեջ ներգրավվելը:

- Կացության ծառայությունները պահանջում են նախնական թույլտվություն Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանից:
- Կացության ծառայությունները ներառում են ընդունում և գնահատում, խնամքի համակարգում, անհատական խորհրդատվություն, խմբային խորհրդատվություն, ընտանեկան թերապիա, դեղորայքային ծառայություններ, կախվածության բուժման դեղորայք ափիոնների օգտագործման հետևանքով առաջացած խանգարման համար, կախվածության բուժման դեղորայք ալկոհոլի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման, և այլ ոչ ափիոնային հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման համար, հիվանդների ուսուցման, վերականգնման ծառայություններ և հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման* ճգնաժամային միջամտության ծառայություններ:
- Կացության ծառայությունների  մատակարարներից պահանջվում է կամ ուղղակիորեն տեղում դեղորայք առաջարկել կախվածության բուժման համար, կամ հեշտացնել հասանելիությունը կախվածության բուժման համար նախատեսված դեղորայքի, հաստատությունից դուրս, ստացիոնար բուժման ընթացքում: Կացության ծառայությունների մատակարարները չեն բավարարում այս պահանջը՝ տրամադրելով միայն դեղորայքի կոնտակտային

տեղեկատվությունը բժիշկ-նարկոլոգների համար: Կացության ծառայությունների մատակարարները պարտավոր են առաջարկել և նշանակել դեղորայք այնշահառուներին, ովքեր ընդգրկված են  Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի շրջանակներում:

- [Վարչաշրջան] (համաձայնագրի շրջանակում բավականին մանրամասն ներառեք առկա ցանկացած լրացուցիչ տեղեկատվություն նպաստների չափի, տևողության և ծավալի վերաբերյալ, որպեսզի համոզվեք, որ շահառուները հասկանում են այն նպաստները, որոնց իրավունքն ունեն)

**Ստացիոնար բուժման ծառայություններ (կարող է տարբեր լինել ըստ վարչաշրջանի)**

- Ստացիոնար ծառայությունները մատակարարվում են 24-ժամյա միջավայրում, որն ապահովում է մասնագիտորեն ուղղված գնահատում, դիտարկում, բժշկական մոնիտորինգ և կախվածության բուժում ստացիոնար ռեժիմում: Ծառայությունների մեծ մասը տրամադրվում է անձամբ, սակայն հեռահար բժշկությունը և հեռախոսը կարող են օգտագործվել նաև ծառայություններ մատուցելու համար, երբ անձը գտնվում է ստացիոնար բուժման մեջ:
- Ստացիոնար ծառայությունները հստակ կառուցվածք ունեն, և բժիշկը, ամենայն հավանականությամբ, տեղում հասանելի է օրական 24 ժամ, ինչպես նաև հավաստագիր ունեցող բուժքույրերի*, թմրամոլության խորհրդատուի և բժշկական հաստատության այլ անձնակազմի հետ միասին: Ստացիոնար ծառայությունները ներառում են գնահատում, խնամքի համակարգում, խորհրդատվություն, ընտանեկան թերապիա, դեղորայքային ծառայություններ, կախվածության բուժման դեղորայք ափիոնների օգտագործման խանգարման համար, կախվածության բուժման դեղորայք ալկոհոլի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման համար, և այլ ոչ ափիոնային դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարումների համար, հիվանդների ուսուցում, վերականգնման

ծառայություններ և հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման ճգնաժամային միջամտության ծառայություններ:

**Թմրամիջոցների բուժման ծրագիր**

- Թմրամիջոցների բուժման ծրագրերը ամբուլատոր ծրագրեր են, որոնք տրամադրում են Սննդի և դեղորայքի վերահսկողության վարչության (FDA) կողմից հաստատված դեղեր հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարումը բուժելու համար, երբ բժշկի կողմից նշանակվում է որպես բժշկական անհրաժեշտություն: Թմրամիջոցների բուժման ծրագրերը պետք է դեղորայք առաջարկեն և նշանակվեն շահառուներին, որոնք ընդգրկված են Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի դեղերի տեղեկատուի մեջ, ներառյալ մեթադոն, բուպրենորֆին, նալոքսոն և դիսուլֆիրամ:
- Շահառուն պետք է օրացուցային ամսվա ընթացքում առնվազն 50 րոպե անհատական զրույց ունենա: Այս անհատական զրույցները կարող են տրամադրվել անձամբ, հեռահար բժշկության միջոցով կամ հեռախոսով: Թմրամիջոցների բուժման ծառայությունները ներառում են գնահատում, խնամքի համակարգում, խորհրդատվություն, ընտանեկան թերապիա, բժշկական հոգեթերապիա, դեղորայքային ծառայություններ, կախվածության բուժման դեղորայք ափիոնների օգտագործման հետևանքով առաջացած խանգարման համար, կախվածության բուժման դեղորայք ալկոհոլի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման համար, և այլ ոչ ափիոնային հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման համար, հիվանդների ուսուցում, վերականգնողական ծառայություններ և հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման ճգնաժամային միջամտության ծառայություններ:
- [Վարչաշրջան] (համաձայնագրի շրջանակում բավականին մանրամասն ներառեք առկա ցանկացած լրացուցիչ տեղեկատվություն նպաստների չափի,

տևողության և ծավալի վերաբերյալ, որպեսզի համոզվեք, որ շահառուները հասկանում են այն նպաստները, որոնց իրավունքն ունեն)

## Հրաժարման կառավարում

- Հրաժարման կառավարման ծառայություններն անհետաձգելի են և տրամադրվում են կարճաժամկետ հիմունքներով: Հրաժարման կառավարման ծառայությունները կարող են տրամադրվել մինչև ամբողջական գնահատման ավարտը և կարող են տրամադրվել ամբուլատոր, կացության կամ ստացիոնար պայմաններում:
- Յուրաքանչյուր շահառու պետք է բնակվի հաստատությունում, եթե ստանում է կացության ծառայություն և կվերահսկվի դետոքսիկացման գործընթացի ժամանակ: Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ հաբիլիտացիոն և ռեաբիլիտացիոն ծառայությունները նշանակվում են լիցենզավորված բժշկի կամ բուժաշխատողի կողմից:
- Հրաժարման կառավարման ծառայությունները ներառում են գնահատում, խնամքի համակարգում, դեղորայքի ծառայություններ, կախվածության բուժման դեղորայք ափիոնների օգտագործման հետևանքով առաջացած խանգարման համար, կախվածության բուժման դեղորայք *ալկոհոլի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման համար և այլ ոչ ափիոնային հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման , զննման և վերականգնողական ծառայություններ:
- [Վարչաշրջան] (համաձայնագրի շրջանակում բավականին մանրամասն ներառեք առկա ցանկացած լրացուցիչ տեղեկատվություն նպաստների չափի, տևողության և ծավալի վերաբերյալ, որպեսզի համոզվեք, որ շահառուները հասկանում են այն նպաստները, որոնց իրավունքն ունեն)

## Դեղորայք  կախվածության  բուժման համար (MAT)

- Կախվածության բուժման դեղորայքի  ծառայություններն առկա են կլինիկական և ոչ կլինիկական հաստատություններում:Կախվածության բուժման դեղորայքը  դեղատոմսով դեղերի օգտագործումն է համակցված խորհրդատվության և վարքագծային թերապիայի հետ՝ հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման* բուժման անհատական մոտեցում ապահովելու համար: Կախվածության բուժման դեղորայքը  ներառում է FDA-ի կողմից հաստատված բոլոր դեղամիջոցները և կենսաբանական միջոցները, որոնք ուղղված են ալկոհոլի օգտագործման հետ կապված խանգարումը, ափիոնների օգտագործման հետևանքով առաջացած խանգարումը և ցանկացած հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարումը բուժելու համար: Շահառուներն իրավունք ունեն ստանալ դեղորայք կախվածության բուժման համար տեղում կամ հաստատությունից դուրս՝ ուղեգրի միջոցով:
- Կախվածության բուժման դեղորայքը   կարող է տրամադրվել հետևյալ ծառայություններով՝ գնահատում, խնամքի համակարգում, անհատական խորհրդատվություն, խմբային խորհրդատվություն, ընտանեկան թերապիա, դեղորայքային ծառայություններ, հիվանդների ուսուցում, վերականգնողական ծառայություններ, հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման ճգնաժամային միջամտության ծառայություններ, և հրաժարման կառավարման ծառայություններ:
- [Վարչաշրջան] (համաձայնագրի շրջանակում բավականին մանրամասն ներառեք առկա ցանկացած լրացուցիչ տեղեկատվություն նպաստների չափի, տևողության և ծավալի վերաբերյալ, որպեսզի համոզվեք, որ շահառուները հասկանում են այն նպաստները, որոնց իրավունքն ունեն)
- Շահառուները կարող են նաև օգտվել կախվածության բուժման դեղորայքից Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանից դուրս: Օրինակ՝ կախվածության բուժման դեղորայքը, ինչպիսին է նալոքսոնը, կարող է նշանակվել առաջնային խնամքի մատակարարների որոշ բուժաշխատողների կողմից, ովքեր աշխատում են ձեր Medi-Cal-ի կառավարվող խնամքի պլանի կամ Medi-Cal-ի «Ծառայություն վճարի դիմաց»

սովորական ծրագրի հետ և կարող են հատկացվել կամ մատակարարվել դեղատանը:

**Փոխօգնության ծառայություններ** (կարող է տարբեր լինել ըստ վարչաշրջանի)

- Փոխօգնության ծառայությունների տրամադրումը պարտադիր չէ մասնակից վարչաշրջանների համար: [Վարչաշրջանը պետք է պարզաբանի, թե արդյոք վարչաշրջանը չի ֆինանսավորում փոխօգնության ծառայությունները Drug Medi-Ca-ի կազմակերպված առաքման համակարգի համար:]
- Փոխօգնության ծառայությունները մշակութային առումով իրավասու անհատական և խմբային ծառայություններ են, որոնք նպաստում են վերականգնմանը, ճկունությանը, ներառմանը, սոցիալականացմանը, ինքնավստահությանը, ինքնապաշտպանությանը, բնական աջակցության զարգացմանը և ուժեղ կողմերի բացահայտմանը՝ կառուցվածքային գործունեության միջոցով: Այս ծառայությունները կարող են տրամադրվել ձեզ կամ ձեր նշանակալի աջակցության նշանակած անձին(անձանց) և կարող են ստացվել միաժամանակ, երբ դուք ստանում եք Drug Medi-Cal-ի կառավարվող առաքման համակարգի այլ ծառայություններ: Փոխօգնության ծառայություններում փոխօգնության մասնագետը վերականգնողական վիճակում գտնվող անհատն է, ով ունի ընթացիկ նահանգի կողմից հաստատված վավերացման ծրագիր, ով տրամադրում է այս ծառայությունները վարքագծային առողջության մասնագետի ղեկավարությամբ, ով լիցենզավորված է, մերժված կամ գրանցված է նահանգում:
- Փոխօգնության ծառայությունները ներառում են կրթական հմտությունների զարգացման խմբեր, ներգրավվածության ծառայություններ, որոնք խրախուսում են ձեզ մասնակցել վարքագծային առողջության պահպանմանը և թերապևտիկ գործունեությանը, ինչպիսին է ինքնապաշտպանությունը խրախուսելը:

- [Վարչաշրջան] (համաձայնագրի շրջանակում բավականին մանրամասն ներառեք առկա ցանկացած լրացուցիչ տեղեկատվություն նպաստների չափի, տևողության և ծավալի վերաբերյալ, որպեսզի համոզվեք, որ շահառուները հասկանում են այն նպաստները, որոնց իրավունքն ունեն)

**Վերականգնողական ծառայություններ**

- Վերականգնողական ծառայությունները կարող են կարևոր լինել ձեր ապաքինման և առողջացման համար: Վերականգնողական ծառայությունները կարող են օգնել ձեզ կապվել բուժող համայնքի հետ՝ կառավարելու ձեր առողջությունը և բժշկական ծառայությունների մատուցումը: Հետևաբար, այս ծառայությունը ընդգծում է ձեր դերը ձեր առողջության կառավարման գործում՝ օգտագործելով արդյունավետ ինքնակառավարման աջակցության մեթոդներ, և կազմակերպելով ներքին և համայնքային ռեսուրսներ՝ շարունակական ինքնակառավարման աջակցություն տրամադրելու համար:
- Դուք կարող եք ստանալ վերականգնողական ծառայություններ ձեր ինքնագնահատման կամ ռեցիդիվ ռիսկի մատակարարի գնահատման հիման վրա: Ծառայությունները կարող են տրամադրվել անձամբ, հեռահար բժշկության միջոցով կամ հեռախոսով:
- Վերականգնողական ծառայությունները ներառում են գնահատում, խնամքի համակարգում, անհատական խորհրդատվություն, խմբային խորհրդատվություն, ընտանեկան թերապիա, վերականգնողական մոնիտորինգ և ռեցիդիվների կանխարգելման բաղադրիչներ:
- [Վարչաշրջան] (համաձայնագրի շրջանակում բավականին մանրամասն ներառեք առկա ցանկացած լրացուցիչ տեղեկատվություն նպաստների չափի, տևողության և ծավալի վերաբերյալ, որպեսզի համոզվեք, որ շահառուները հասկանում են այն նպաստները, որոնց իրավունքն ունեն)

**Խնամքի համակարգում**

- Խնամքի համակարգման ծառայությունները բաղկացած են գործողություններից՝ ապահովելու հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման խնամքի, հոգեկան առողջության խնամքի և բժշկական խնամքի համակարգումը, և կապեր ապահովելու ձեր առողջության ծառայությունների և աջակցության համար:
- Խնամքի համակարգման ծառայությունները ներառում են համակարգում բժշկական և հոգեկան առողջության մատակարարների հետ՝ առողջական պայմանները վերահսկելու և աջակցելու համար, դուրսգրման պլանավորումը և օժանդակ ծառայությունների հետ համակարգումը, ներառյալ ձեր կապը համայնքային ծառայությունների հետ, ինչպիսիք են՝ երեխաների խնամքը, տրանսպորտը և բնակարանը:
- [Վարչաշրջան] (համաձայնագրի շրջանակում բավականին մանրամասն ներառեք առկա ցանկացած լրացուցիչ տեղեկատվություն նպաստների չափի, տևողության և ծավալի վերաբերյալ, որպեսզի համոզվեք, որ շահառուները հասկանում են այն նպաստները, որոնց իրավունքն ունեն)

**Նոպաների կառավարում (կարող է տարբեր լինել ըստ վարչաշրջանի)**

- Նոպաների կառավարման ծառայությունների տրամադրումը ընտրովի է մասնակից վարչաշրջանների համար: [Վարչաշրջանը պետք է պարզաբանի, թե արդյոք վարչաշրջանը չի ֆինանսավորում նոպաների կառավարման ծառայությունները:]
- Նոպաների կառավարման ծառայությունները խթանիչների օգտագործման խանգարման գիտականորեն ապացուցված մեթոդներով բուժում են, որտեղ իրավասու շահառուները կմասնակցեն նոպաների կառավարման 24-շաբաթյա ամբուլատոր ծառայություններին, որին հաջորդում է վեց կամ ավելի ամիս լրացուցիչ բուժման և վերականգնման ծառայություններ՝ առանց խթանման:

- Նոպաների կառավարման ծառայությունների սկզբնական 12 շաբաթը ներառում է մի շարք խթաններ բուժման նպատակներին հասնելու համար, մասնավորապես՝ չօգտագործելով խթանիչներ (օրինակ՝ կոկային, ամֆետամին և մետամֆետամին), որը կստուգվի մեզի թմրամիջոցների թեստերի միջոցով: Խրախուսանքները բաղկացած են դրամական միջոցների համարժեքներից (օրինակ՝ նվեր քարտերից):
- Նոպաների կառավարման ծառայությունները հասանելի են միայն շահառուներին, ովքեր ծառայություններ են ստանում ոչ բնակելի հաստատությունում, որը գործում է մասնակից մատակարարի կողմից և ընդգրկված են ու մասնակցում են  համապարփակ, անհատականացված բուժման կուրսին:
- [Վարչաշրջան] (համաձայնագրի շրջանակում բավականին մանրամասն ներառեք առկա ցանկացած լրացուցիչ տեղեկատվություն նպաստների չափի, տևողության և ծավալի վերաբերյալ, որպեսզի համոզվեք, որ շահառուները հասկանում են այն նպաստները, որոնց իրավունքն ունեն)

**Սքրինինգ, գնահատում, կարճ միջամտություն, բուժման ուղեգիր**(SABIRT)

Ալկոհոլի և թմրամիջոցների սքրինինգը, գնահատումը, կարճ միջամտությունները և բուժման ուղեգիրը Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի նպաստ չէ: Դա նպաստ է Medi-Cal-ի վճար ծառայության դիմաց և Medi-Cal-ի կառավարվող խնամքի տրամադրման համակարգերում 11 տարեկան և ավելի բարձր տարիքի շահառուների համար: Կառավարվող խնամքի ծրագրերը պետք է ապահովեն հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման փոխհատուցվող ծառայություններ, ներառյալ ալկոհոլի և թմրամիջոցների օգտագործման սքրինինք, գնահատում, կարճ միջամտություններ և բուժման ուղեգիր (SABIRT) 11 տարեկան և ավելի բարձր տարիքի շահառուների համար:

**Վաղ մանկության ժամանակ միջամտության ծառայություններ**

Վաղ մանկության ժամանակ միջամտության ծառայությունները ֆինանսավորվում են Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի ծառայությունների միջոցով մինչև 21 տարեկանից ցածր շահառուների համար: 21 տարեկանից ցածր ցանկացած շահառու, ով հետազոտվել է և որոշվել է, որ նա ենթակա է հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման զարգացման ռիսկին, կարող է ստանալ ցանկացած ծառայություն, որը ֆինանսավորվում է ծառայության ամբուլատոր մակարդակով, որպես վաղ մանկության ժամանակվա միջամտության ծառայություններ: Հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման ախտորոշում չի պահանջվում 21 տարեկանից ցածր շահառուների վաղ մանկության ժամանակ միջամտության ծառայությունների համար:

**Վաղ պարբերաբար կատարվող սքրինինգ, ախտորոշում և բուժում**

21 տարեկանից ցածր շահառուներն իրավասու են ստանալ այս ձեռնարկում ավելի վաղ նկարագրված ծառայությունները, ինչպես նաև Medi-Cal-ի լրացուցիչ ծառայությունները նպաստի միջոցով, որը կոչվում է վաղ և պարբերաբար կատարվող սքրինինգ, ախտորոշում և բուժում:

Վաղ և պարբերաբար կատարվող սքրինինգի, ախտորոշման և բուժման ծառայություններին իրավասու լինելու համար շահառուն պետք է լինի 21 տարեկանից ցածր և ունենա Medi-Cal-ի ամբողջական շրջանակ: Վաղ և պարբերաբար կատարվող սքրինինգը, ախտորոշումը և բուժումը ֆինանսավորում է ծառայություններ, որոնք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են թերությունները և ֆիզիկական ու վարքային առողջական վիճակները շտկելու կամ օգնելու համար: Ծառայությունները, որոնք պահպանում են, աջակցում, բարելավում կամ ավելի տանելի են դարձնում վիճակը, համարվում են օգնություն տվյալ վիճակին և ֆինանսավորվում են որպես վաղ և պարբերական սքրինինգի, ախտորոշման և բուժման ծառայություններ:

Եթե հարցեր ունեք վաղ և պարբերական սքրինինգի, ախտորոշման և բուժման ծառայությունների մասին, խնդրում ենք զանգահարել [Վարչաշրջանը պետք է տեղադրի համապատասխան տեղեկատվությունն այստեղ] կամ այցելել DHCS-ի Early and Periodic Screening, Diagnostic, and Treatment կայքէջ:
DMC-ODS առաքման համակարգում առաջարկվող ծառայությունները հասանելի են հեռախոսով կամ հեռահար բժշկության միջոցով, բացառությամբ թմրամիջոցների բուժման ծառայությունների և հրաժարման կառավարման բժշկական գնահատումների:

**Հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման բուժման ծառայություններն առկա են կառավարվող խնամքի պլաններում կամ Medi-Cal-ի «կանոնավոր» «Ծառայություն վճարի դիմաց» ծրագրում»**

Կառավարվող խնամքի ծրագրերը պետք է տրամադրեն հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման ֆինանսավորվող ծառայություններ, ներառյալ ալկոհոլի և թմրամիջոցների օգտագործման սքրինինգ, գնահատում, կարճ միջամտություններ և բուժման ուղեգիր (SABIRT) 11 տարեկան և ավելի բարձր տարիքի շահառուների համար, ներառյալ հղի անդամներն առաջնային խնամքի հաստատություններում և ծխախոտի, ալկոհոլի, և արգելված թմրամիջոցների սքրինինգը: Կառավարվող խնամքի ծրագրերը պետք է նաև տրամադրեն կամ կազմակերպեն կախվածության բուժման համար նախատեսված դեղորայքի նախապատրաստում (նաև հայտնի է որպես դեղորայքային օգնության բուժում), որը տրամադրվում է առաջնային խնամքի, ստացիոնար հիվանդանոցում, շտապ օգնության բաժանմունքներում և այլ պայմանագրային բժշկական հաստատություններում: Կառավարվող խնամքի ծրագրերը պետք է նաև տրամադրեն շտապ օգնության ծառայություններ, որոնք անհրաժեշտ են շահառուի վիճակը կայունացնելու համար, ներառյալ կամավոր ստացիոնար դետոքսիկացիան:

**Լրացուցիչ հատուկ տեղեկատվություն վարչաշրջանի մասին**

Տեղադրեք վարչաշրջանի մասին  հատուկ տեղեկատվությունն այստեղ [եթե կա]:

## ԻՆՉՊԵՍ ՍՏԱՆԱԼ DRUG MEDI-CAL-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԱՌԱՔՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Ինչպե՞ս կարող եմ ստանալ Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի ծառայություններ

Եթե կարծում եք, որ կարիք ունեք հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարումների բուժման ծառայությունների, կարող եք դրանք ստանալ՝ Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանում ինքներդ խնդրելով դրանք: Դուք կարող եք զանգահարել ձեր վարչաշրջանի անվճար հեռախոսահամարով, որը նշված է այս ձեռնարկի առաջին բաժնում: Դուք կարող եք նաև ուղեգրվել ձեր Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջան հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման այլ եղանակներով բուժման ծառայությունների համար:
Ձեր Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը պարտավոր է ընդունել ուղեգրեր հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման բուժման ծառայությունների համար այն բժիշկներից և առաջնային խնամքի այլ մատակարարներից, ովքեր կարծում են, որ դուք կարող եք այդ ծառայությունների կարիքն ունենալ ձեր Medi-Cal-ի կառավարվող խնամքի առողջապահական պլանից, եթե շահառու եք: Սովորաբար, մատակարարին կամ Medi-Cal-ի կառավարվող խնամքի առողջապահական պլանին անհրաժեշտ կլինի ձեր թույլտվությունը կամ երեխայի ծնողի կամ խնամողի թույլտվությունը՝ ուղեգիր տալու համար, բացառությամբ շտապ օգնության դեպքերի: Մյուս մարդիկ և կազմակերպությունները կարող են նաև ուղեգրեր տալ վարչաշրջանին՝ ներառյալ դպրոցները, վարչաշրջանի բարեկեցության կամ սոցիալական ծառայությունների բաժինները, պահապանները, խնամակալները կամ ընտանիքի անդամները և իրավապահ մարմինները:
Ֆինանսավորվող ծառայությունները հասանելի են *[Տեղադրեք վարչաշրջանի անվանում(ներ)ը] մատակարարի ցանցի միջոցով: Եթե որևէ պայմանագրային մատակարար առարկում է որևէ ֆինանսավորվող ծառայություն կատարելու կամ այլ

կերպ աջակցելու վերաբերյալ, *[Տեղադրեք վարչաշրջանի անվանումը]-ը կկազմակերպի, որ այլ մատակարար կատարի ծառայությունը: *[Տեղադրեք վարչաշրջանի անվանումԼ]-ը կպատասխանի ժամանակին տրված ուղեգրերով և համակարգմամբ, եթե ֆինանսավորվող ծառայությունը հասանելի չէ մատակարարից՝ ֆինանսավորվող ծառայության դեմ կրոնական, էթիկական կամ բարոյական առարկությունների պատճառով: Ձեր վարչաշրջանը չի կարող մերժել նախնական գնահատում կատարելու հարցումը՝ որոշելու, թե արդյոք դուք համապատասխանում եք Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի ծառայությունների մատչելիության չափանիշներին:
[Վարչաշրջանը պետք է ներառի նկարագրություն, որն արտացոլում է խնամքի քաղաքականության անցումը գրանցվածների և հնարավոր գրանցվածների համար:]

## Որտե՞ղ կարող եմ ձեռք բերել Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի ծառայություններ

*[Տեղադրեք վարչաշրջանի անվանումը]-ը մասնակցում է Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի ծրագրին: Քանի որ դուք *[Տեղադրեք վարչաշրջանի անվանումը]-ի բնակիչ եք, ապա կարող եք ստանալ Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի ծառայություններ այն վարչաշրջանում, որտեղ ապրում եք՝ Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի միջոցով:
Ձեր Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանն ունի հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման բուժման մատակարարներ, ովքեր հասանելի են պլանով ֆինանսավորվող վիճակները բուժելու համար:
Մյուս վարչաշրջանները, որոնք չեն մասնակցում Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգին կարող են տրամադրել Drug Medi-Cal-ի հետևյալ ծառայությունները՝

- Ամբուլատոր բուժում
- Թմրամիջոցների բուժում

- Նալտրեքսոնով բուժում
- Ինտենսիվ ամբուլատոր բուժում
- Պերինատալ կացության թմրամիջոցների չարաշահման ծառայություն (չհաշված սենյակն ու սնունդը)

Եթե դուք 21 տարեկանից ցածր եք, դուք նաև իրավունք ունեք վաղ և պարբերական սքրինինգ, ախտորոշում և բուժում ծառայություններ ստանալ նահանգի ցանկացած այլ վարչաշրջանում:

**Խնամք ոչ աշխատանքային ժամերին**

[Վարչաշրջանը պետք է ներառի նկարագրություն, որը  պարզաբանում է աշխատանքային ժամերից հետո տրամադրվող խնամքի հասանելիության միջոցները]

**Ինչպե՞ս կարող եմ իմանալ, երբ օգնության կարիք ունեմ:**

Շատ մարդիկ իրենց կյանքում դժվար ժամանակներ են ունենում և կարող են զգալ հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման խնդիրներ: Ամենակարևորը, որ պետք է հիշել  այն է, որ օգնությունը հասանելի է, եթե դուք իրավունք ունեք ստանալ Medi-Cal, և եթե կարծում եք, որ հնարավոր է մասնագիտական օգնության կարիք ունենաք, ապա պետք է գնահատում խնդրեք ձեր Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանից հաստատ պարզելու համար, որ ներկայումս բնակվում եք Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի մասնակից վարչաշրջանում:

**Ինչպե՞ս կարող եմ իմանալ, երբ երեխան կամ դեռահասը օգնության կարիք ունի**

Դուք կարող եք կապվել ձեր մասնակցող Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի հետ՝ ձեր երեխայի կամ դեռահասի գնահատման համար, եթե կարծում եք, որ նա ցույց է տալիս հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման նշաններից որևէ մեկը: Եթե ձեր երեխան կամ դեռահասը համապատասխանում է Medi-Cal-ի պահանջներին, և վարչաշրջանի գնահատումը ցույց է տալիս, որ անհրաժեշտ են թմրամիջոցների և ալկոհոլի բուժման ծառայություններ, որոնք ֆինանսավորվում են մասնակից վարչաշրջանի կողմից, վարչաշրջանը կպայմանավորվի, որ ձեր երեխան կամ դեռահասը ստանա ծառայությունները:

**Ե՞րբ կարող եմ ստանալ Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի ծառայություններ:**

Ձեր Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը պետք է համապատասխանի նահանգի տեսակցության ժամի չափանիշներին, երբ դուք տեսակցություն եք նշանակում ծառայություններ ստանալու համար Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանում: Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը պետք է ձեզ տեսակցություն առաջարկի, որը համապատասխանում է տեսակցության ժամի հետևյալ չափանիշներին.

- Ամբուլատոր և ինտենսիվ ամբուլատոր ծառայությունների համար հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման բուժման մատակարարի հետ ծառայություններ սկսելու վերաբերյալ ձեր ոչ հրատապ հարցումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում,
- Թմրամիջոցների բուժման ծրագրի ծառայությունների ձեր հարցումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում,
- Հետագա տեսակցություն 10 օրվա ընթացքում, եթե դուք բուժման կուրս եք անցնում շարունակվող հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման համար, բացառությամբ ձեզ բուժող մատակարարի կողմից բացահայտված որոշ դեպքերի:

**Ո՞վ է որոշում, թե որ ծառայությունները ես կստանամ:**

Դուք, ձեր մատակարարը և Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը  ներգրավված են որոշելու, թե ինչ ծառայություններ պետք է ստանաք Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի միջոցով: Յոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման մատակարարը կխոսի ձեզ հետ, և նրանց գնահատման միջոցով նրանք կօգնեն որոշել, թե որ ծառայություններն են տեղին՝ ելնելով ձեր կարիքներից:

Յոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարումը բուժող մատակարարը կգնահատի, թե արդյոք դուք ունեք հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարում և կառաջարկի ձեր կարիքներին համապատասխան ծառայությունները: Դուք կկարողանաք ստանալ ձեզ անհրաժեշտ ծառայությունները, մինչ ձեր մատակարարն անցկացնի այս գնահատումը:

Եթե դուք 21 տարեկանից փոքր եք, Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը պետք է տրամադրի բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայություններ, որոնք կօգնեն շտկել կամ բարելավել ձեր հոգեկան առողջության վիճակը: Այն ծառայությունները, որոնք պահպանում, աջակցում, բարելավում կամ ավելի տանելի են դարձնում վարքագծային առողջական վիճակը, համարվում են բժշկական տեսանկյունից անհրաժեշտ:

**Լրացուցիչ հատուկ տեղեկատվություն վարչաշրջանի մասին**

Տեղադրեք վարչաշրջանի մասին  հատուկ տեղեկատվությունն այստեղ [եթե կա]:

## ԻՆՉՊԵՍ ՍՏԱՆԱԼ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Որտե՞ղ կարող եմ ստանալ հոգեկան առողջության մասնագիտացված ծառայություններ:**

Դուք կարող եք ստանալ հոգեկան առողջության մասնագիտացված ծառայություններ այն վարչաշրջանում, որտեղ ապրում եք: *[Վարչաշրջանը կարող է լրացուցիչ տեղեկատվություն տեղադրել հոգեկան առողջության պլանով ֆինանսավորվող սպասարկման տարածքի մասին]: Յուրաքանչյուր վարչաշրջան ունի հոգեկան առողջության հատուկ ծառայություններ երեխաների, երիտասարդների, չափահասների և տարեցների համար: Եթե դուք 21 տարեկանից ցածր եք, ապա իրավունք ունեք ստանալ վաղ և պարբերական սքրինինգ, ախտորոշում և բուժում, որը կարող է ներառել լրացուցիչ ֆինանսավորում և նպաստներ:

Ձեր հոգեկան առողջության պլանը կորոշի, թե արդյոք դուք համապատասխանում եք մատչելիության չափանիշներին հոգեկան առողջության մասնագիտացված ծառայությունների համար: Եթե այո, ապա հոգեկան առողջության պլանը կուղարկի ձեզ հոգեկան առողջության մատակարարի մոտ, ով կհետազոտի ձեզ, որպեսզի որոշի, թե ինչ ծառայություններ են ձեզ անհրաժեշտ:

Դուք կարող եք նաև խնդրել գնահատում ձեր կառավարվող խնամքի պլանից, եթե շահառու եք հանդիսանում: Եթե կառավարվող խնամքի պլանը որոշի, որ դուք համապատասխանում եք հոգեկան առողջության մասնագիտացված ծառայություններից օգտվելու մատչելիության չափանիշներին, կառավարվող խնամքի պլանը կօգնի ձեզ անցնել հոգեկան առողջության ծառայություններ ստանալուն՝ հոգեկան առողջության ծրագրի միջոցով: Հոգեկան առողջության ծառայություններից օգտվելու սխալ ձև չկա:

**Լրացուցիչ հատուկ տեղեկատվություն վարչաշրջանի մասին**

Տեղադրեք վարչաշրջանի մասին  հատուկ տեղեկատվությունն այստեղ [եթե կա]:

## ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

**Որո՞նք են հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման բուժման ծառայությունների ֆինանսավորման մատչելիության չափանիշները:**

Որպես որոշման մաս, թե արդյոք ձեզ անհրաժեշտ են հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման բուժման ծառայություններ, Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը կաշխատի ձեր և ձեր մատակարարի հետ՝ որոշելու, թե արդյոք դուք համապատասխանում եք մատչելիության չափանիշներին,* որպեսզի ստանաք *Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի ծառայություններ: Այս բաժինը բացատրում է, թե ինչպես ձեր մասնակից վարչաշրջանը կկայացնի այդ որոշումը:

Ձեր մատակարարը կաշխատի ձեզ հետ՝ գնահատում իրականացնելու համար, որպեսզի որոշի, թե Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի որ ծառայություններն են ձեզ առավել հարմար: Այս գնահատումը պետք է կատարվի առերես, հեռահար բժշկության միջոցով կամ հեռախոսով: Դուք կարող եք ստանալ որոշ ծառայություններ, մինչ գնահատումը տեղի է ունենում:

Գնահատումն ավարտելուց հետո ձեր մատակարարը կորոշի, թե արդյոք դուք համապատասխանում եք հետևյալ մատչելիության չափանիշներին՝ Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի միջոցով ծառայություններ ստանալու համար.

- Դուք պետք է գրանցված լինեք Medi-Cal-ում:
- Դուք պետք է բնակվեք այն վարչաշրջանում, որը մասնակցում է  Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգին:
- Դուք պետք է ունենաք առնվազն մեկ ախտորոշում հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած և կախվածություն առաջացնող խանգարման համար հոգեկան խանգարման ախտորոշիչ և վիճակագրական ձեռնարկից (բացառությամբ ծխախոտի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման և ոչ հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով

առաջացած խանգարման) կամ առնվազն մեկ ախտորոշում ունենաք Յոգեկան խանգարման ախտորոշիչ և վիճակագրական ձեռնարկից հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած և կախվածություն առաջացնող խանգարման համար՝ մինչև բանտարկվելը կամ ազատազրկման ընթացքում (բացառությամբ ծխախոտի ագտագործման հետևանքով առաջացած խանգարման և ոչ հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման):

21 տարեկանից ցածր շահառուները կարող են ստանալ Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի ծառայությունները, երբ համապատասխանում են վաղ և պարբերական սքրինինգի, ախտորոշման և բուժման բժշկական անհրաժեշտության չափանիշներին՝ անկախ իրենց բնակության վարչաշրջանից և անկախ վերը նկարագրված ախտորոշման պահանջից:

**Ի՞նչ է բժշկական անհրաժեշտությունը**

Ձեր ստացած ծառայությունները պետք է լինեն բժշկական տեսանկյունից անհրաժեշտ և համապատասխան՝ ձեր վիճակը բուժելու համար: 21 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց համար ծառայությունը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է, երբ դա ողջամիտ և անհրաժեշտ է ձեր կյանքը պաշտպանելու, լուրջ հիվանդությունները կամ հաշմանդամությունը կանխելու կամ ծանր ցավը թեթևացնելու համար: 21 տարեկանից ցածր շահառուների համար ծառայությունը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է, եթե ծառայությունը  շտկում կամ օգնում է հոգեմետ դեղերի չարաշահումը կամ հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարմանը: Այն ծառայությունները, որոնք պահպանում, աջակցում, բարելավում կամ ավելի տանելի են դարձնում նյութերի չարաշահումը կամ հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարումը, համարվում են օգնող այդ վիճակին, և այսպիսով ֆինանսավորվում են որպես վաղ և պարբերական սքրինինգի, ախտորոշման և բուժման ծառայություններ:

## ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

**Ինչպե՞ս կարող եմ մատակարար գտնել ինձ անհրաժեշտ հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման բուժման ծառայությունների համար:**

Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգը կարող է որոշակի սահմանափակումներ դնել մատակարարների ձեր ընտրության վրա: Դուք կարող եք խնդրել, որ ձեր Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը ձեզ տրամադրի մատակարարների նախնական ընտրություն: Ձեր Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգը պետք է նաև թույլ տա ձեզ փոխել մատակարարներին: Եթե խնդրում եք փոխել մատակարարներին, վարչաշրջանը պետք է թույլ տա ձեզ հնարավորության դեպքում ընտրել առնվազն երկու մատակարարների միջև:
Ձեր վարչաշրջանը պետք է առցանց տեղադրի ընթացիկ մատակարարների գրացուցակը: Եթե հարցեր ունեք ընթացիկ մատակարարների վերաբերյալ կամ ցանկանում եք թարմացված մատակարարների գրացուցակը, այցելեք ձեր վարչաշրջանի կայքէջը *[Վարչաշրջանը պետք է տեղադրի մատակարարի գրացուցակի հղումը] կամ զանգահարեք վարչաշրջանի անվճար հեռախոսահամարով: Ընթացիկ մատակարարի գրացուցակը էլեկտրոնային եղանակով հասանելի է վարչաշրջանի կայքէջում կամ թղթային տարբերակով՝ ըստ պահանջի:
Երբեմն Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի պայմանագրային մատակարարներն ընտրում են այլևս չտրամադրել Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի ծառայություններ որպես Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի մատակարար, այլևս պայմանագրեր չկնքել Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի հետ, կամ այլևս չընդունել Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի հիվանդներին ինքնուրույն կամ Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի խնդրանքով: Երբ դա տեղի

ունենա, Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը պետք է բարեխղճորեն ջանքեր գործադրի, որպեսզի գրավոր ծանուցագիր ուղարկի յուրաքանչյուրի անձի վարչաշրջանի մատակարարի հետ պայմանագրի դադարեցման մասին՝ դադարեցման ծանուցագիրը ստանալուց կամ տրամադրելուց հետո 15 օրվա ընթացքում, ով մատակարարից ստանում էր հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման բուժման ծառայություններ: Ամերիկյան հնդիկները և Ալյասկայի բնիկները, ովքեր իրավունք ունեն մասնակցել Medi-Cal-ի ծրագրին  և բնակվում են այն վարչաշրջաններում, որոնք թույլտվություն են ստացել Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգում, կարող են նաև ստանալ Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի ծառայություններ հնդկական առողջապահական խնամքի մատակարարների միջոցով, որոնք ունեն Տվյալների մոնիտորինգի անկախ հանձնաժողովի (DMC) անհրաժեշտ վկայական:

**Երբ ես գտնեմ մատակարար, կարո՞ղ է Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանն ասել մատակարարին, թե ինչ ծառայություններ եմ ես ստանում:**

Դուք, ձեր մատակարարը և Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը ներգրավված եք որոշելու, թե ինչ ծառայություններ պետք է ստանաք վարչաշրջանի միջոցով՝ հետևելով մատչելիության չափանիշներին Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի ծառայությունների համար: Երբեմն վարչաշրջանը որոշումը թողնում է ձեզ և մատակարարին: Այլ դեպքերում, Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը կարող է պահանջել, որ ձեր մատակարարը խնդրի Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանին վերանայել պատճառները, որոնցից ելնելով մատակարարը կարծում է, որ դուք ծառայության կարիք ունեք, նախքան ծառայության տրամադրումը: Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը պետք է օգտագործի որակավորված մասնագետ՝ վերանայումը կատարելու համար:

Այս վերանայման գործընթացը կոչվում է պլանի թույտվության ստացման գործընթաց: Ծառայությունների համար նախնական թույտվության ստացում չի պահանջվում, բացառությամբ կացության և ստացիոնար ծառայությունների (բացառությամբ հրաժարման կառավարման ծառայությունների): Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի թույտվության ստացման գործընթացը պետք է հետևի կոնկրետ ժամանակացույցերին: Ստանդարտ թույտվության ստացման համար պլանը պետք է որոշում կայացնի ձեր մատակարարի խնդրանքով 14 օրացուցային օրվա ընթացքում:
Եթե դուք կամ ձեր մատակարարը խնդրեք, կամ եթե Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը կարծում է, որ ձեր շահերից է բխում ավելի շատ տեղեկատվություն ստանալ ձեր մատակարարից, ժամանակացույցը կարող է երկարաձգվել մինչև ևս 14 օրացուցային օրով: Դրա օրինակը, թե երբ կարող է երկարաձգումը ձեզ հետաքրքրել, այն է, երբ վարչաշրջանը կարծում է, որ կարող է հաստատել ձեր մատակարարի թույլտվության ստացման խնդրանքը, եթե Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը լրացուցիչ տեղեկատվություն ունենար ձեր մատակարարից և ստիպված լիներ մերժել խնդրանքն առանց տեղեկատվության:
Եթե Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը երկարաձգի ժամանակացույցը, վարչաշրջանը ձեզ գրավոր ծանուցագիր կուղարկի երկարաձգման մասին:

Եթե վարչաշրջանը որոշում չի կայացնում ստանդարտ կամ արագացված թույլտվության ստացման խնդրանքի համար պահանջվող ժամկետներում, Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը պետք է ձեզ ուղարկի նպաստի մասին անբարենպաստ որոշման ծանուցագիր՝ տեղեկացնելով, որ ծառայությունները մերժվել են, և որ դուք կարող եք բողոքարկել կամ խնդրել նահանգային արդար լսումներ:

Դուք կարող եք խնդրել Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանին՝ իր թույլտվության ստացման գործընթացի մասին լրացուցիչ տեղեկատվություն տրամադրել:
Եթե համաձայն չեք թույլտվության ստացման գործընթացի վերաբերյալ Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի որոշման հետ, կարող եք բողոքարկում ներկայացնել վարչաշրջանին կամ խնդրել նահանգային արդար լսումներ: Լրացուցիչ տեղեկությունների համար տես խնդրի լուծում բաժինը:

**Ո՞ր ծառայության մատակարարներից է օգտվում իմ Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը**

Եթե դուք նոր եք Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանում, ձեր Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի մատակարարների ամբողջական ցանկը կարող եք գտնել *[Վարչաշրջանը պետք է տեղադրի մատակարարների գրացուցակի հղումը], և պարունակում է տեղեկատվություն այն մասին, թե որտեղ են գտնվում մատակարարների հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման բուժման ծառայությունները, որոնք նրանք տրամադրում են, և այլ տեղեկատվություն, որը կօգնի ձեզ օգտվել խնամքից, ներառյալ մատակարարների կողմից տրամադրվող մշակութային և լեզվական ծառայությունների վերաբերյալ տղեկատվությունը: Եթե մատակարարների վերաբերյալ հարցեր ունեք, զանգահարեք ձեր վարչաշրջանի անվճար հեռախոսահամարին, որը գտնվում է այս ձեռնարկի առաջին բաժնում:

**Լրացուցիչ հատուկ տեղեկատվություն վարչաշրջանի մասին**

Տեղադրեք վարչաշրջանի մասին  հատուկ տեղեկատվությունն այստեղ [եթե կա]:

## ՆՊԱՍՏԻ ՄԱՍԻՆ ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՈՐՈՇՄԱՆ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

**Ի՞նչ իրավունքներ ունեմ ես, եթե Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը մերժի այն ծառայությունները, որոնք ես ուզում եմ կամ կարծում եմ, որ ինձ անհրաժեշտ են:**

Եթե ձեր Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը մերժում, սահմանափակում, նվազեցնում, հետաձգում կամ դադարեցնում է այն ծառայությունները, որոնք դուք ուզում եք կամ կարծում եք, որ պետք է ստանաք, դուք իրավունք ունեք ստանալ ծանուցագիր (կոչվում է «նպաստի մասին անբարենպաստ որոշման ծանուցագիր»)Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանից: Դուք նաև իրավունք ունեք չհամաձայնվել որոշման հետ՝ խնդրելով  բողոքարկում: Ստորև բերված բաժինները քննարկում են ծանուցագրի ձեր իրավունքը և ինչ անել, եթե համաձայն չեք ձեր Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի որոշման հետ:

**Ի՞նչ է նպաստի մասին անբարենպաստ որոշումը:**

Նպաստի մասին անբարենպաստ որոշումը սահմանվում է որպես հետևյալ գործողություններից որևէ մեկը, որոնք ձեռնարկվել են Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի կողմից:

1. Հայցվող ծառայության մերժումը կամ սահմանափակ թույլտվության ստացումը, ներառյալ որոշումները՝ հիմնված ծառայության տեսակի կամ մակարդակի, բժշկական անհրաժեշտության, համապատասխանության, միջավայրի կամ ֆինանսավորվող նպաստի արդյունավետության վրա,
2. Նախկինում լիազորված ծառայության կրճատումը, կասեցումը կամ դադարեցումը,
3. Ծառայության համար վճարման ամբողջությամբ կամ մասամբ մերժումը,
4. Ծառայությունները ժամանակին չմատուցելը,
5. Դժգոհությունների և բողոքարկումների ստանդարտ լուծման համար

պահանջվող ժամկետներում չգործելը (եթե դուք դժգոհություն եք ներկայացնում Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանին, և Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանն 90 օրվա ընթացքում չի պատասխանում ձեր դժգոհության վերաբերյալ գրավոր որոշմամբ: Եթե դուք բողոքարկում եք ներկայացնում Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի միջոցով և  Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը 30 օրվա ընթացքում ձեր բողոքարկման վերաբերյալ գրավոր որոշում չի ուղարկում ձեզ, կամ եթե դուք արագացված բողոքարկում եք ներկայացրել և չեք ստացել պատասխան 72 ժամվա ընթացքում), կամ

6. Ֆինանսական պարտավորությունը վիճարկելու շահառուի խնդրանքի մերժումը:

**Ինչ է նպաստի մասին անբարենպաստ որոշման ծանուցագիրը:**

Նպաստի մասին անբարենպաստ որոշման ծանուցագիրը նամակ է, որը ձեր Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը կուղարկի ձեզ, եթե որոշում կայացնի մերժել, սահմանափակել, նվազեցնել, հետաձգել կամ դադարեցնել ծառայությունները, որոնք դուք և ձեր մատակարարը կարծում եք, որ պետք է ստանաք:  Սա ներառում է վճարման մերժում ծառայության համար, մերժում, որը հիմնված է այն պահանջի վրա, որ ծառայությունները չեն ֆինանսավորվում, կամ մերժում, որ ծառայությունը սխալ առաքման համակարգի համար է, կամ խնդրանքի մերժում՝ ֆինանսական պարտավորությունը վիճարկելու համար: Նպաստի մասին անբարենպաստ որոշման ծանուցագիրը նաև օգտագործվում է՝ ձեզ տեղեկացնելու, եթե ձեր դժգոհությունը, բողոքարկումը կամ արագացված բողոքարկումը ժամանակին չի լուծվել, կամ եթե դուք ծառայություններ չեք ստացել Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի ծառայությունների տրամադրման ժամանակացույցի չափորոշիչների սահմաններում: Դուք իրավունք ունեք ստանալ գրավոր ծանուցագիր նպաստի մասին անբարենպաստ որոշման մասին:

**Ծանուցագրի ժամկետ**

Ծրագիրը պետք է փոստով ուղարկի ծանուցագիրը շահառուին ՝ նախկինում լիազորված Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի ծառայության դադարեցման, կասեցման կամ կրճատման գործողության օրվանից սկսած առնվազն 10 օր առաջ: Պլանը պետք է նաև փոստով ուղարկի ծանուցագիրը շահառուին վճարումը մերժելու մասին որոշումից կամ Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի բոլոր ծառայությունների ամբողջի կամ մի մասի մերժման, հետաձգման կամ փոփոխության պատճառ դարձած որոշումներից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում: Եթե դուք ստանում եք նպաստի մասին անբարենպաստ որոշման ծանուցագիր՝ ծառայությունն արդեն ստանալուց հետո, դուք ստիպված չեք վճարել ծառայության համար:

**Արդյո՞ք ես միշտ կստանամ նպաստի մասին անբարենպաստ որոշման ծանուցագիր, երբ չստանամ իմ ուզած ծառայությունները:**

Այո, դուք պետք է ստանաք նպաստի մասին անբարենպաստ որոշման ծանուցագիր: Սակայն, եթե ծանուցագիր չստանաք,դուք կարող եք բողոքարկում ներկայացնել Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման վարչաշրջանին, կամ եթե ավարտել եք բողոքարկման գործընթացը, կարող եք խնդրել նահանգային արդար լսումներ: Երբ կապ եք հաստատում ձեր վարչաշրջանի հետ, նշեք, որ դուք տեղյակ եք նպաստի մասին անբարենպաստ որոշման մասին, բայց ծանուցագիր չեք ստանում: Բողոքարկում ներկայացնելու կամ արդար դատաքննության խնդրանքի մասին տեղեկատվությունը ներառված է այս ձեռնարկում: Տեղեկատվությունը պետք է հասանելի լինի նաև ձեր մատակարարի գրասենյակում:

**Ի՞նչ կտեղեկացնի ինձ նպաստի մասին անբարենպաստ որոշման ծանուցագիրը:**

Նպաստի մասին անբարենպաստ որոշման ծանուցագիրը ձեզ կտեղեկացնի հետևյալը.

- Ի՞նչ է արել ձեր Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը, որն ազդում է ձեր և ծառայություններ ստանալու ձեր կարողության վրա:
- Որոշման ուժի մեջ մտնելու ամսաթիվը և պատճառը, թե ինչու է պլանը որոշում կայացրել:
- Նահանգը կամ դաշնային կանոնները, որոնց Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը հետևում էր որոշումը կայացնելիս:
- Որո՞նք են ձեր իրավունքները, եթե համաձայն չեք պլանի կատարածի հետ:
- Ինչպե՞ս բողոքարկում ներկայացնել պլանին:
- Ինչպե՞ս խնդրել նահանգային արդար լսումներ:
- Ինչպե՞ս խնդրել արագացված բողոքարկում կամ արագացված արդար լսումներ:
- Ինչպե՞ս օգնություն ստանալ բողոքարկում ներկայացնելու կամ նահանգային արդար լսումներ խնդրելու հարցում:
- Որքա՞ն ժամանակ պետք է բողոքարկում ներկայացնեք կամ խնդրեք նահանգային արդար լսումներ:
- Ձեր իրավունքները շարունակել ծառայություններ ստանալ, մինչ դուք սպասում եք բողոքարկման կամ նահանգային արդար լսումների որոշմանը, ինչպես պահանջել այս ծառայությունների շարունակությունը, և արդյոք այդ ծառայությունների ծախսերը կֆինանսավորվեն Medi-Cal-ի կողմից:
- Ե՞րբ դուք պետք է ներկայացնեք ձեր բողոքարկման կամ նահանգային արդար լսմումների խնդրանքը, եթե ցանկանում եք, որ ծառայությունները շարունակվեն:

**Ի՞նչ պետք է անեմ, երբ ստանամ նպաստի մասին անբարենպաստ որոշման ծանուցագիր:**

Երբ դուք ստանաք նպաստի մասին անբարենպաստ որոշման ծանուցագիր, դուք պետք է ուշադիր կարդաք ծանուցագրի  ամբողջ տեղեկատվությունը: Եթե չեք հասկանում  ծանուցագիրը, ձեր Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը կարող է օգնել ձեզ: Կարող եք նաև խնդրել մեկ այլ անձի օգնել ձեզ:

Դուք կարող եք խնդրել դադարեցված ծառայության շարունակություն, երբ ներկայացնեք բողոքարկում կամ նահանգային արդար լսումների խնդրանք: Դուք պետք է խնդրեք ծառայությունների շարունակություն ոչ ուշ, քան 10 օրացուցային օր անց սկսած այն ամսաթվից, երբ նպաստի մասին անբարենպաստ որոշման ծանուցագիրը կրում է փոստային նշում կամ անձամբ տրվել է ձեզ, կամ նախքան փոփոխությունն ուժի մեջ մտնելը:

**Լրացուցիչ հատուկ տեղեկատվություն վարչաշրջանի մասին**

Տեղադրեք վարչաշրջանի մասին  հատուկ տեղեկատվությունն այստեղ [եթե կա]:

## ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

**Ի՞նչ անել, եթե ես չստանամ իմ ուզած ծառայությունները իմ վարչաշրջանից Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի պլանից:**

Ձեր  Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը ունի միջոց՝ լուծելու ձեր ստացած հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման բուժման ծառայությունների հետ կապված ցանկացած խնդիր: Սա կոչվում է խնդրի լուծման գործընթաց և կարող է ներառել հետևյալ գործընթացները:

1. **Դժգոհության գործընթաց** – դժգոհության արտահայտում ձեր հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման բուժման ծառայությունների հետ կապված որևէ բանի վերաբերյալ՝ բացառելով նպաստի մասին անբարենպաստ որոշումը:
2. **Բողոքարկման գործընթաց** – որոշման վերանայում (մերժման, դադարեցման կամ կրճատման ծառայություններ), որն ընդունվել է ձեր հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման բուժման ծառայությունների վերաբերյալ Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի կամ ձեր մատակարարի կողմից:
3. **Նահանգային արդար լսումների գործընթաց** – վերանայեք՝ համոզվելու, որ դուք ստանում եք հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման բուժման ծառայությունները, որոնց իրավունքն ունեք Medi-Cal-ի ծրագրի շրջանակներում:

Դժգոհություն կամ բողոքարկում ներկայացնելը կամ նահանգային արդար լսումներ խնդրելը բացասական ազդեցություն չի ունենա ձեզ վրա և չի ազդի ձեր ստացած ծառայությունների վրա: Երբ ձեր դժգոհությունը կամ բողոքարկումն ավարտվի, ձեր Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը կտեղեկացնի ձեզ և ներգրավված մյուսներին վերջնական արդյունքի մասին: Երբ ձեր նահանգային արդար լսումներն ավարտվեն, նահանգային արդար լսումների գրասենյակը կտեղեկացնի ձեզ և մատակարարին վերջնական արդյունքի մասին:

Իմացեք ավելին յուրաքանչյուր խնդրի լուծման գործընթացի մասին ստորև:

**Կարո՞ղ եմ օգնություն ստանալ բողոքարկում, դժգոհություն կամ նահանգային արդար լսումներ ներկայացնելու համար:**

Ձեր  Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանում կլինեն մարդիկ, ովքեր կբացատրեն ձեզ այս գործընթացները և կօգնեն ձեզ հայտնել խնդրի մասին՝ որպես դժգոհություն, բողոքարկում, կամ որպես նահանգային լսումների խնդրանք: Նրանք կարող են նաև օգնել ձեզ որոշել, թե արդյոք դուք համապատասխանում եք այսպես կոչված «արագացված» գործընթացին, ինչը նշանակում է, որ այն ավելի արագ կվերանայվի, քանի որ ձեր առողջությունը կամ կայունությունը վտանգված են: Դուք կարող եք նաև լիազորել մեկ այլ անձի՝ գործելու ձեր անունից, ներառյալ ձեր հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման բուժմամբ զբաղվող մատակարարը կամ փաստաբանը: Ձեր Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը պետք է ձեզ ցանկացած ողջամիտ օգնություն ցույց տա դժգոհության կամ բողոքարկման հետ կապված ձևաթղթերը և ընթացակարգային այլ քայլերը լրացնելու հարցում: Սա ներառում է, բայց չի սահմանափակվում միայն թարգմանչական ծառայությունների և անվճար հեռախոսահամարների տրամադրմամբ՝ (TTY/TDD) և թարգմանչի հնարավորություններով:

**Ի՞նչ անել, եթե ես օգնության կարիք ունեմ իմ Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի ծրագրի հետ կապված խնդիրը լուծելու համար, բայց չեմ ուզում դժգոհություն կամ բողոքարկում ներկայացնել:**

Դուք կարող եք օգնություն ստանալ նահանգից, եթե դժվարանում եք գտնել ճիշտ մարդկանց ձեր վարչաշրջանում, ովքեր կօգնեն ձեզ գլուխ հանել համակարգից:

Դուք կարող եք կապվել Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի առողջապահական խնամքի ծառայությունների վարչության հետ երկուշաբթիից ուրբաթ, առավոտյան 8-ից մինչև երեկոյան 5-ը՝ (բացառությամբ տոների) 888-452-8609 հեռախոսահամարով կամ էլեկտրոնային փոստով՝ [MMCDOmbudsmanOffice@dhcs.ca.gov](mailto:MMCDOmbudsmanOffice@dhcs.ca.gov) կայքով:

**Խնդրում ենք նկատի ունենալ.** Էլեկտրոնային փոստի հաղորդագրությունները գաղտնի չեն համարվում: Դուք չպետք է ներառեք անձնական տվյալներն էլեկտրոնային փոստի հաղորդագրությունում:

Դուք կարող եք անվճար իրավաբանական օգնություն ստանալ ձեր տեղական իրավաբանական օգնության գրասենյակում կամ այլ խմբերում: Դուք կարող եք հարցնել ձեր լսումների իրավունքների կամ անվճար իրավաբանական օգնության մասին Հանրային հետաքննության և արձագանքման բաժնից՝

Զանգահարեք **1-800-952-5253** անվճար հեռախոսահամարով

Եթե խուլ եք և օգտագործում եք տեքստային հեռախոս (TDD), զանգահարեք **1-800-952-8349** հեռախոսահամարով

**Լրացուցիչ հատուկ տեղեկատվություն վարչաշրջանի մասին**

Տեղադրեք վարչաշրջանի մասին  հատուկ տեղեկատվությունն այստեղ [եթե կա]:

## ԴԺԳՈՀՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

**Ի՞նչ է դժգոհությունը:**

Դժգոհությունը դժբախտության արտահայտումն է ձեր հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման բուժման ծառայությունների առնչությամբ, որոնք չեն հանդիսանում բողոքարկման և նահանգային արդար լսումների գործընթացների խնդիրներից մեկը:

Դժգոհության գործընթացը՝

- Կներառի պարզ և հեշտ հասկանալի ընթացակարգեր, որոնք թույլ են տալիս ներկայացնել ձեր դժգոհությունը բանավոր կամ գրավոր:
- Որևէ կերպ բացասական ազդեցություն չի ունենա ձեր կամ ձեր մատակարարի վրա:
- Թույլ կտա ձեզ լիազորել մեկ այլ անձի՝ գործելու ձեր անունից, ներառյալ մատակարարին կամ փաստաբանին: Եթե դուք լիազորում եք մեկ այլ անձի գործել ձեր անունից, Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը կարող է խնդրել ձեզ ստորագրել մի ձևաթուղթ, որը թույլ է տալիս պլանին տեղեկատվություն տրամադրել այդ անձին:
- Կապահովի, որ որոշումներ կայացնող անհատները որակավորված լինեն դա անելու համար և ներգրավված չլինեն վերանայման կամ որոշումների կայացման նախորդ մակարդակներում:
- Կսահմանի ձեր, ձեր Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի և ձեր մատակարարի դերերն ու պարտականությունները:
- Որոշում կկայացնի դժգոհության վերաբերյալ պահանջվող ժամկետներում:

**Ե՞րբ կարող եմ դժգոհություն ներկայացնել:**

Ցանկացած ժամանակ կարող եք դժգոհություն ներկայացնել Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջան, եթե գոհ չեք հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման բուժման

ծառայություններից, որոնք ստանում եք Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանից կամ այլ մտահոգություն ունեք Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի առնչությամբ:

**Ինչպե՞ս կարող եմ դժգոհություն ներկայացնել:**

Դուք կարող եք զանգահարել ձեր Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի անվճար հեռախոսահամարին՝ դժգոհության հետ կապված օգնություն ստանալու համար: Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը կտրամադրի հետադարձ հասցեով ծրարներ մատակարարների բոլոր կայքերում, որպեսզի դուք փոստով ուղարկեք ձեր դժգոհությունը: Դժգոհությունները կարող են ներկայացվել բանավոր կամ գրավոր: Պարտադիր չէ, որ բանավոր դժգոհությանը հաջորդի գրավոր դժգոհությունը:

**Ինչպե՞ս կարող եմ իմանալ, արդյոք վարչաշրջանի պլանը ստացել է իմ դժգոհությունը:**

Ձեր Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը ձեզ կտեղեկացնի, որ ստացել է ձեր դժգոհությունը՝ ուղարկելով ձեզ գրավոր հաստատում:

**Ե՞րբ որոշում կկայացվի իմ դժգոհության վերաբերյալ:**

Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը պետք է որոշում կայացնի ձեր դժգոհության վերաբերյալ ձեր դժգոհությունը ներկայացնելու օրվանից սկսած 90 օրացուցային օրվա ընթացքում: Ժամկետները կարող են երկարաձգվել մինչև 14 օրացուցային օրով, եթե դուք երկարաձգում եք պահանջում, կամ եթե Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը կարծում է, որ լրացուցիչ տեղեկատվության կարիք կա, և որ հետաձգումը ձեր

օգտին է: Մի օրինակ, թե երբ հետաձգումը կարող է լինել ձեր օգտին, այն է, երբ վարչաշրջանը կարծում է, որ կարող է որոշում կայացնել ձեր դժգոհության վերաբերյալ, եթե Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը մի փոքր ավելի շատ ժամանակ ունենար ձեզանից կամ ներգրավված այլ մարդկանցից տեղեկատվություն ստանալու համար:

**Ինչպե՞ս կարող եմ իմանալ, արդյոք Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգիվարչաշրջանը որոշում է կայացրել իմ դժգոհության վերաբերյալ:**

Երբ ձեր դժգոհության վերաբերյալ որոշում կայացվի, Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը ձեզ կամ ձեր ներկայացուցչին գրավոր կտեղեկացնի որոշման մասին: Եթե ձեր Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը չի կարողանում ժամանակին ծանուցել ձեզ կամ որևէ տուժած կողմի դժգոհության որոշման մասին, ապա Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը ձեզ կտրամադրի նպաստի մասին անբարենպաստ որոշման ծանուցագիր, որը ձեզ խորհուրդ է տալիս նահանգային արդար լսումներ խնդրելու ձեր իրավունքի մասին: Ձեր Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը պետք է ձեզ տրամադրի նպաստի մասին անբարենպաստ որոշման ծանուցագիր ժամկետի ավարտի օրը:

**Դժգոհությունը ներկայացնելու վերջնաժամկետ կա՞:**

Դուք կարող եք դժգոհություն ներկայացնել ցանկացած ժամանակ:

**Լրացուցիչ հատուկ տեղեկատվություն վարչաշրջանի մասին**

Տեղադրեք վարչաշրջանի մասին հատուկ տեղեկատվությունն այստեղ [եթե կա]:

## ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ (ՍՏԱՆԴԱՐՏ ԵՎ ԱՐԱԳԱՑՎԱԾ)

Ձեր Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը պատասխանատու է՝ ձեզ թույլ տալու վիճարկել ձեր հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման բուժման ծառայությունների վերաբերյալ որոշումը, որը կայացվել է ծրագրերի կամ ձեր մատակարարների կողմից, որոնց հետ դուք համաձայն չեք: Երկու ձև կա, որոնցով կարող եք վերանայում պահանջել: Ձևերից մեկը՝ ստանդարտ բողոքարկման գործընթացի օգտագործումն է: Երկրորդ ձևն արագացված բողոքարկման գործընթացի օգտագործումն է: Բողոքարկումների այս երկու տեսակները նման են, այնուամենայնիվ, կան հատուկ պահանջներ՝ իրավասու լինելու արագացված բողոքարկման համար: Հատուկ պահանջները բացատրվում են ստորև:

### Ի՞նչ է ստանդարտ բողոքարկումը

Ստանդարտ բողոքարկումը ծրագրի կամ ձեր մատակարարի հետ ունեցած ձեր խնդրի վերանայման խնդրանքն է, որը ներառում է մերժում կամ փոփոխություններ, որոնք դուք կարծում եք, որ ձեզ անհրաժեշտ են: Եթե դուք ստանդարտ բողոքարկում եք խնդրում, Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանին կարող է մինչև 30 օրացուցային անհրաժեշտ լինել այն վերանայելու համար: Եթե կարծում եք, որ 30 օրացուցային օր սպասելը վտանգի տակ կդնի ձեր առողջությունը, դուք պետք է խնդրեք «արագացված բողոքարկում»:

Ստանդարտ բողոքարկման գործընթացը՝

- Ձեզ թույլ կտա բողոքարկում ներկայացնել անձամբ, հեռախոսով կամ գրավոր կերպով:
- Կապահովի, որ բողոքարկում ներկայացնելը որևէ կերպ բացասական ազդեցություն չունենա ձեր կամ ձեր մատակարարի վրա:
- Թույլ կտա ձեզ լիազորել մեկ այլ անձի՝ գործելու ձեր անունից, ներառյալ մատակարարին: Եթե դուք լիազորում եք մեկ այլ անձի գործել ձեր անունից,

պլանը կարող է խնդրել ձեզ ստորագրել մի ձևաթուղթ, որը թույլ է տալիս ծրագրին տեղեկատվություն տրամադրել այդ անձին:

- Կշարունակի ձեր նպաստները բողոքարկման խնդրանքով պահանջվող ժամկետում, որը 10 օրացուցային օր է այն օրվանից, երբ ձեր նպաստի մասին անբարենպաստ որոշման ծանուցագիրը փոստային կնիքով կամ անձամբ ձեզ է հանձնվել: Դուք ստիպված չեք լինի վճարել շարունակական ծառայությունների համար, քանի դեռ բողոքարկումն ընթացքի մեջ է: Եթե դուք իսկապես խնդրում եք նպաստի շարունակություն, և բողոքարկման վերջնական որոշումը հաստատում է ձեր ստացած ծառայությունը նվազեցնելու կամ դադարեցնելու որոշումը, ձեզանից կարող է պահանջվել վճարել տրամադրված ծառայությունների արժեքը, քանի դեռ բողոքարկումն ընթացքի մեջ է,
- Կապահովի, որ որոշումներ կայացնող անձինք որակավորվեն դա անելու համար և ներգրավված չլինեն վերանայման կամ որոշումների կայացման նախկին մակարդակում:
- Թույլ կտա ձեզ կամ ձեր ներկայացուցչին ուսումնասիրել ձեր գործի նյութերը, ներառյալ ձեր բժշկական գրառումը, և ցանկացած այլ փաստաթղթեր կամ գրառումներ, որոնք դիտարկվել են բողոքարկման գործընթացում, բողոքարկման գործընթացից առաջ և դրա ընթացքում:
- Թույլ կտա Ձեզ ողջամիտ հնարավորություն ունենալ՝ անձամբ կամ գրավոր ներկայացնելու փաստերի կամ օրենքի վերաբերյալ ապացույցներ և պնդումներ:
- Թույլ կտա ձեզ, ձեր ներկայացուցչին կամ մահացած շահառուի գույքի օրինական ներկայացուցչին ներգրավվել որպես բողոքարկման կողմ:
- Կտեղեկացնի, որ ձեր բողոքարկումը վերանայվում է՝ ուղարկելով ձեզ գրավոր հաստատում:
- Կտեղեկացնի ձեզ նահանգային արդար լսումներ խնդրելու ձեր իրավունքի մասին՝ բողոքարկման գործընթացի ավարտից հետո:

## Ե՞րբ կարող եմ բողոքարկում ներկայացնել

Դուք կարող եք բողոքարկում ներկայացնել ձեր վարչաշրջանի Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի պլանի հետ՝

- Եթե ձեր վարչաշրջանը կամ վարչաշրջանի պայմանագրային մատակարարներից մեկը որոշի, որ դուք իրավունք չունեք ստանալ Medi-Cal-ի հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման բուժման ծառայություններ, քանի որ չեք համապատասխանում բժշկական անհրաժեշտության չափանիշներին:
- Եթե ձեր մատակարարը կարծում է, որ ձեզ անհրաժեշտ է հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման բուժման ծառայություն և խնդրում է վարչաշրջանի հաստատումը, բայց վարչաշրջանը չի համաձայնում և մերժում է ձեր մատակարարի խնդրանքը կամ փոխում է ծառայության տեսակը կամ հաճախականությունը:
- Եթե ձեր մատակարարը խնդրել է Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանին հաստատման համար, սակայն վարչաշրջանին ավելի շատ տեղեկատվություն է հարկավոր որոշում կայացնելու համար և ժամանակին չի ավարտում հաստատման գործընթացը:
- Եթե ձեր Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը ձեզ ծառայություններ չի տրամադրում այն ժամանակացույցերի հիման վրա, որը սահմանել է Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը:
- Եթե կարծում եք, որ Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը բավականաչափ շուտ չի տրամադրում ծառայություններ՝ ձեր կարիքները բավարարելու համար:
- Եթե ձեր դժգոհությունը, բողոքարկումը կամ արագացված բողոքարկումը ժամանակին չեն լուծվել:
- Եթե դուք և ձեր մատակարարը համաձայն չեք ձեզ անհրաժեշտ հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման բուժման ծառայությունների հետ:

**Ինչպե՞ս կարող եմ բողոքարկում ներկայացնել**

Դուք կարող եք զանգահարել ձեր Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի անվճար հեռախոսահամարին՝ բողոքարկում ներկայացնելու հարցում օգնություն ստանալու համար: Ծրագիրը կտրամադրի հետադարձ հասցեով ծրարներ բոլոր մատակարարների կայքերում, որպեսզի փոստով ուղարկեք ձեր բողոքարկումը: Բողոքարկումները կարող են ներկայացվել բանավոր կամ գրավոր:

**Ինչպե՞ս կարող եմ իմանալ, արդյոք որոշում կայացվել է իմ բողոքարկման վերաբերյալ**

Ձեր Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի պլանը ձեզ կամ ձեր ներկայացուցչին գրավոր կտեղեկացնի ձեր բողոքարկման վերաբերյալ իրենց որոշման մասին: Ծանուցագիրը կունենա հետևյալ տեղեկատվությունը՝

- Բողոքարկման լուծման գործընթացի արդյունքները:
- Բողոքարկման որոշման ընդունման ամսաթիվը:
- Եթե բողոքարկումն ամբողջությամբ չի լուծվում ձեր օգտին, ծանուցագիրը նաև կպարունակի տեղեկատվություն նահանգային արդար լսումների ձեր իրավունքի և նահանգային արդար լսումներ ներկայացնելու ընթացակարգի վերաբերյալ:

**Արդյո՞ք կա բողոքարկում ներկայացնելու վերջնաժամկետ:**

Դուք պետք է բողոքարկում ներկայացնեք նպաստի մասին անբարենպաստ որոշման ծանուցագրի օրվանից սկսած 60 օրացուցային օրվա ընթացքում: Հիշեք, որ դուք միշտ չէ, որ կստանաք նպաստի մասին անբարենպաստ որոշման ծանուցագիր: Բողոքարկում ներկայացնելու վերջնաժամկետներ չկան, եթե դուք չեք ստանում նպաստի մասին անբարենպաստ որոշման ծանուցագիր, այնպես որ կարող եք ցանկացած ժամանակ այս տեսակի բողոքարկում ներկայացնել:

**Ե՞րբ է իմ բողոքարկման վերաբերյալ որոշում կայացվելու**

Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը պետք է որոշում կայացնի ձեր բողոքարկման վերաբերյալ 30 օրացուցային օրվա ընթացքում սկսած այն պահից, երբ Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը ստանա ձեր բողոքարկման հարցումը: Ժամկետները կարող են երկարաձգվել մինչև 14 օրացուցային օրով, եթե երկարաձգում եք պահանջում, կամ եթե Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը կարծում է, որ լրացուցիչ տեղեկատվության կարիք կա, և որ հետաձգումը ձեր օգտին է: Մի օրինակ, թե երբ հետաձգումը կարող է լինել ձեր օգտին, այն է, երբ վարչաշրջանը կարծում է, որ կարող է հաստատել ձեր բողոքարկումը, եթե Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը մի փոքր ավելի շատ ժամանակ ունենար՝ ձեզանից կամ ձեր մատակարարից տեղեկատվություն ստանալու համար:

**Ի՞նչ անել, եթե ես չեմ կարող 30 օր սպասել բողոքարկման որոշման կայացմանը**

Բողոքարկման գործընթացն ավելի արագ կարող է լինել, եթե այն համապատասխանում է արագացված բողոքարկման գործընթացին:

**Ի՞նչ է արագացված բողոքարկումը:**

Արագացված բողոքարկումը ձեր բողոքարկման վերաբերյալ որոշման կայացման ավելի արագ միջոց է: Արագացված բողոքարկման գործընթացը նման է ստանդարտ բողոքարկման գործընթացին: Այնուամենայնիվ,

- Ձեր բողոքարկումը պետք է համապատասխանի որոշակի պահանջների:
- Արագացված բողոքարկումների գործընթացը նաև հետևում է այլ վերջնաժամկետների, քան ստանդարտ բողոքարկումները:

- Դուք կարող եք բանավոր խնդրանք ներկայացնել արագացված բողոքարկման համար: Պետք չէ ձեր արագացված բողոքարկման խնդրանքը գրավոր ներկայացնել:

### Ե՞րբ կարող եմ արագացված բողոքարկում ներկայացնել

Եթե կարծում եք, որ ստանդարտ բողոքարկման վերաբերյալ որոշման կայացման համար մինչև 30 օրացուցային օր սպասելը կվտանգի ձեր կյանքը, առողջությունը կամ առավելագույն գործունեությանը հասնելու, պահպանելու կամ վերականգնելու կարողությունը, կարող եք խնդրել բողոքարկման արագ լուծում: Եթե Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը համաձայնում է, որ ձեր բողոքարկումը համապատասխանում է արագացված բողոքարկման պահանջներին, ձեր վարչաշրջանը կլուծի ձեր արագացված բողոքարկումը 72 ժամվա ընթացքում սկսած այն բանից հետո, երբ Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը կստանա բողոքարկումը:

Ժամկետները կարող են երկարաձգվել մինչև 14 օրացուցային օրով, եթե դուք երկարաձգում եք խնդրում, կամ եթե Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը ցույց է տալիս, որ լրացուցիչ տեղեկատվության կարիք կա, և որ հետաձգումը ձեր շահերից է բխում: Եթե ձեր Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը երկարաձգի ժամկետները, ծրագիրը ձեզ գրավոր բացատրություն կտա, թե ինչու են երկարաձգվել ժամկետները:

Եթե Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը որոշի, որ ձեր բողոքարկումը չի համապատասխանում արագացված բողոքարկմանը, *Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը պետք է ողջամիտ ջանքեր գործադրի ձեզ անհապաղ բանավոր ծանուցագիր տալու համար, և 2 օրացուցային օրվա ընթացքում ձեզ գրավոր կտեղեկացնի՝ ներկայացնելով

որոշման պատճառը: Ձեր բողոքարկումը կքննարկվի այս բաժնում ավելի վաղ նշված բողոքարկման ստանդարտ ժամկետների համաձայն: Եթե համաձայն չեք վարչաշրջանի որոշման հետ, որ ձեր բողոքարկումը չի համապատասխանում արագացված բողոքարկման չափանիշներին, կարող եք դժգոհություն ներկայացնել: Հենց որ ձեր Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը լուծի ձեր արագացված բողոքարկումը, ծրագիրը ձեզ և բոլոր տուժած կողմերին բանավոր և գրավոր կերպով կտեղեկացնի այդ մասին:

**Լրացուցիչ հատուկ տեղեկատվություն վարչաշրջանի մասին**

Տեղադրեք վարչաշրջանի մասին հատուկ տեղեկատվությունն այստեղ [եթե կա]:

## ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԱՐԴԱՐ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑ

### Ի՞նչ են նահանգային արդար լսումները

Նահանգային արդար լսումները California-ի Սոցիալական ծառայությունների բաժնի կողմից անցկացվող անկախ վերանայում են՝ համոզվելու, որ դուք ստանում եք հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման բուժման ծառայությունները, որոնց իրավունքն ունեք Medi-Cal ծրագրի շրջանակներում: Դուք կարող եք նաև այցելել California-ի Սոցիալական ծառայությունների վարչություն https://www.cdss.ca.gov/hearing-requests հասցեով՝ լրացուցիչ ռեսուրսների համար:

### Որո՞նք են իմ նահանգային արդար լսումների իրավունքները

Դուք իրավունք ունեք՝

- Լսումներ ունենալ California-ի Սոցիալական ծառայությունների վարչությունում (նաև կոչվում է նահանգային արդար լսումներ):
- Տեղեկանալ այն մասին, թե ինչպես խնդրել նահանգային արդար լսումներ:
- Տեղեկանալ այն կանոնների մասին, որոնք կարգավորում են ներկայացվածությունը նահանգային արդար լսումներում:
- Շարունակել ստանալ ձեր նպաստները ձեր խնդրանքով՝ նահանգային արդար լսումների գործընթացի ժամանակ, եթե անհրաժեշտ ժամկետներում խնդրեք նահանգային արդար լսումներ:

### Ե՞րբ կարող եմ դիմել նահանգային արդար լսումների համար

Դուք կարող եք դիմել նահանգային արդար լսումների համար՝

- Եթե ավարտել եք Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի բողոքարկման գործընթացը:

- Եթե ձեր վարչաշրջանը կամ վարչաշրջանի պայմանագրային մատակարարներից մեկը որոշի, որ դուք իրավունք չունեք ստանալ  հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման բուժման ցանկացած ծառայություններ Medi-Cal-ի ծրագրով, քանի որ չեք համապատասխանում բժշկական անհրաժեշտության չափանիշներին:
- Եթե ձեր մատակարարը կարծում է, որ ձեզ անհրաժեշտ է հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման բուժման ծառայություն և դիմում է Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի* վարչաշրջանին* հաստատման համար, բայց Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը չի համաձայնում և մերժում է ձեր մատակարարի խնդրանքը կամ փոխում է ծառայության տեսակը կամ հաճախականությունը:
- Եթե ձեր մատակարարը դիմել է Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանին հաստատման համար, սակայն վարչաշրջանին անհրաժեշտ է ավելի շատ տեղեկատվություն որոշում կայացնելու համար և ժամանակին չի ավարտում հաստատման գործընթացը:
- Եթե ձեր Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը չի տրամադրում ձեզ ծառայություններ՝ համաձայն վարչաշրջանի ժամանակացույցերի:
- Եթե կարծում եք, որ Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը բավականաչափ շուտ չի տրամադրում ծառայությունները, որ բավարարի ձեր կարիքները:
- Եթե ձեր դժգոհությունը, բողոքարկումը կամ արագացված բողոքարկումը չեն լուծվել ժամանակին:
- Եթե դուք և ձեր մատակարարը համաձայն չեք ձեզ անհրաժեշտ հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման բուժման ծառայությունների վերաբերյալ:
- Եթե ձեր դժգոհությունը, բողոքարկումը կամ արագացված բողոքարկումը չեն լուծվել ժամանակին:

## Ինչպե՞ս կարող եմ նահանգային արդար լսումներ խնդրել

**Դուք կարող եք խնդրել նահանգային արդար լսումներ՝**

- Առցանց. https://acms.dss.ca.gov/acms/login.request.do
- Գրավոր.ձեր խնդրանքը ներկայացրեք վարչաշրջանի Բարեկեցության վարչություն՝ նպաստի մասին անբարենպաստ որոշման ծանուցագրի մեջ նշված հասցեով կամ ֆաքսով կամ փոստով՝

  California Department of Social Services State Hearings Division
  P.O. Box 944243, Mail Station 9-17-37
  Sacramento, CA 94244-2430

  Կամ ֆաքսով՝ **916-651-5210** կամ **916-651-2789** հեռախոսահամարներով:

Դուք կարող եք նաև պահանջել նահանգային արդար լսումներ կամ նահանգային արագացված արդար լսումներ.

- Հեռախոսով.զանգահարեք Նահանգային լսումների բաժին **800-743-8525** կամ **855-795-0634** անվճար հեռախոսահամարներով, կամ հանրային հարցման և արձագանքման հեռախոսագիծ, **800-952-5253** կամ TDD-ի **800-952-8349** անվճար հեռախոսահամարներով:

## Կա՞ արդյոք նահանգային արդար լսումներ ներկայացնելու վերջնաժամկետ:

Դուք ունեք ընդամենը 120 օրացուցային օր նահանգային արդար լսումներ խնդրելու համար: 120 օրը սկսվում է կամ այն օրվանից, երբ Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը անձամբ է ձեզ տալիս բողոքարկման իր որոշման մասին ծանուցագիրը, կամ վարչաշրջանի բողոքարկման որոշման ծանուցագրի փոստային կնիքի օրվան հաջորդող օրը:
Եթե դուք չեք ստացել նպաստի մասին անբարենպաստ որոշման ծանուցագիր, ցանկացած ժամանակ կարող եք դիմել նահանգային արդար լսումների համար:

**Կարո՞ղ եմ շարունակել ստանալ ծառայությունները, մինչ սպասում եմ նահանգային արդար լսումների որոշմանը**

Այո, եթե դուք ներկայումս բուժում եք ստանում և ցանկանում եք շարունակել ձեր բուժումը մինչ բողոքարկում եք, դուք պետք է խնդրեք նահանգային արդար լսումներ անցկացնել 10 օրվա ընթացքում սկսած այն ամսաթվից, երբ բողոքարկման որոշման ծանուցագիրն ուղարկվել է ձեզ փոստային կնիքով կամ առաքվել է ձեզ, կամ նախքան այն ամսաթիվը, երբ ձեր  Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը հայտնում է, որ ծառայությունները կդադարեցվեն կամ կկրճատվեն: Երբ խնդրում եք նահանգային արդար լսումներ, պետք է ասեք, որ ցանկանում եք շարունակել ստանալ ձեր բուժումը: Բացի այդ, դուք ստիպված չեք լինի վճարել ձեր նահանգային արդար լսումների ընթացքում ստացած ծառայությունների համար: Եթե դուք պահանջում եք նպաստի շարունակում, և նահանգային արդար լսումների վերջնական որոշումը հաստատում է ձեր ստացած ծառայությունը նվազեցնելու կամ ընդհատելու որոշումը, ձեզանից կարող է պահանջվել վճարել մատուցված ծառայությունների արժեքը, մինչ դուք սպասում եք նահանգային արդար լսումներին:

**Ե՞րբ է որոշում կայացվելու իմ նահանգային արդար լսումների որոշման վերաբերյալ:**

Նահանգային արդար լսումներ խնդրելուց հետո կարող է մինչև 90 օր տևել ՝ ձեր գործի վերաբերյալ որոշում կայացնելու և ձեզ պատասխան ուղարկելու համար:

**Կարո՞ղ եմ ավելի արագ նահանգային արդար լսումներ ստանալ**

 Եթե կարծում եք, որ այդքան երկար սպասելը կվնասի ձեր առողջությանը, ապա կարող եք պատասխան ստանալ երեք աշխատանքային օրվա ընթացքում: Խնդրեք

ձեր բժշկին կամ այլ մատակարարի նամակ գրել ձեզ համար: Դուք նաև ինքներդ կարող եք նամակ գրել: Նամակը պետք է մանրամասն բացատրի, թե ինչպես է ձեր գործի որոշմանը մինչև 90 օր սպասելը լրջորեն վնասելու ձեր կյանքին, առողջությանը կամ առավելագույն գործունեությանը հասնելու, պահպանելու կամ վերականգնելու ձեր կարողությանը: Ապա համոզվեք, որ դուք խնդրում եք «արագացված լսումներ» և տրամադրեք նամակ՝ լսումների համար ձեր խնդրանքով:

Դուք կարող եք խնդրել արագացված (ավելի արագ) նահանգային արդար լսումներ, եթե կարծում եք, որ սովորական 90 օրացուցային օրվա ժամկետը լուրջ խնդիրներ կառաջացնի ձեր առողջության հետ, ներառյալ՝ կենսական կարևոր գործառույթներ ձեռք բերելու, պահպանելու կամ վերականգնելու ձեր ունակության հետ կապված խնդիրները: Սոցիալական ծառայությունների վարչությունը, Նահանգային լսումների բաժինը կվերանայեն ձեր խնդրանքն արագացված նահանգային արդար լսումների վերաբերյալ և կորոշեն, թե արդյոք այն բավարարում է պահանջներին: Եթե ձեր արագացված լսումների խնդրանքը հաստատվի, լսումներ կանցկացվեն, և լսումների որոշումը կկայացվի 3 աշխատանքային օրվա ընթացքում սկսած այն օրվանից, երբ Նահանգային լսումների բաժինը ստանա ձեր խնդրանքը:

**Լրացուցիչ հատուկ տեղեկատվություն վարչաշրջանի մասին**

Տեղադրեք վարչաշրջանի մասին հատուկ տեղեկատվությունն այստեղ [եթե կա]:

## ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ CALIFORNIA ՆԱՀԱՆԳԻ MEDI-CAL ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

**Ո՞վ կարող է ստանալ Medi-Cal:**

Դուք կարող եք համապատասխանել Medi-Cal ծրագրի պահանջներին, եթե գտնվում եք հետևյալ խմբերից մեկում՝

- 65 տարեկան կամ ավելի բարձր
- 21 տարեկանից ցածր
- Չափահաս, 21-ից 65 տարեկան՝ ելնելով եկամտի իրավասությունից
- Կույր կամ հաշմանդամ
- Հղի
- Որոշ փախստականներ կամ կուբացի/հաիթիացի ներգաղթյալներ
- Ծերանոցում խնամք ստացող
- 26 տարեկանից ցածր կամ 50 տարեկանից բարձր անհատներ՝ անկախ ներգաղթի կարգավիճակից

Դուք պետք է ապրեք California-ում՝ Medi-Cal-ին համապատասխանելու համար: Զանգահարեք կամ այցելեք ձեր տեղական վարչաշրջանի սոցիալական ծառայությունների գրասենյակ՝ խնդրելով մասնակցել Medi-Cal ծրագրին, կամ ստացեք այն ինտերնետում՝ https://www.dhcs.ca.gov/services/medi-cal/Pages/ApplyforMedi-Cal.aspx հասցեով:

**Պե՞տք է վճարեմ Medi-Cal-ի համար:**

Հնարավոր է, դուք ստիպված լինեք վճարել Medi-Cal-ի համար՝ կախված ամեն ամիս ձեր ստացած կամ վաստակած գումարի չափից:

- Եթե ձեր եկամուտը քիչ է Medi-Cal-ի՝ ձեր ընտանիքի չափի համար սահմանված չափից, ապա դուք ստիպված չեք լինի վճարել Medi-Cal-ի ծառայությունների համար:

- Եթե ձեր եկամուտն ավելին է, քան ձեր ընտանիքի չափի համար նախատեսված Medi-Cal-ի սահմանաչափերը, դուք ստիպված կլինեք որոշակի գումար վճարել ձեր բժշկական կամ հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման բուժման ծառայությունների համար: Այն գումարը, որը դուք վճարում եք, կոչվում է ձեր «ծախսերի բաժին»: Հենց որ վճարեք ձեր «ծախսերի բաժինը», Medi-Cal-ը կվճարի այդ ամսվա ձեր ապահովագրված բժշկական հաշիվների մնացած մասը: Այն ամիսներին, երբ բժշկական ծախսեր չունեք, ոչինչ պետք չէ վճարել:
- Հնարավոր է դուք ստիպված լինեք «համավճար» վճարել ցանկացած բուժման համար Medi-Cal-ի շրջանակներում: Սա նշանակում է, որ դուք ձեր գրպանից գումար եք վճարում ամեն անգամ, երբ ստանում եք բժշկական կամ հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման բուժման ծառայություն կամ նշանակված դեղ (դեղորայք) և համավճար, եթե գնում եք հիվանդանոցի շտապ օգնության բաժանմունք ձեր սովորական ծառայությունների համար:

Ձեր մատակարարը ձեզ կասի, եթե անհրաժեշտ լինի համավճար կատարել:

**Հասանելի՞ է արդյոք փոխադրումը:**

Եթե դժվարանում եք հասնել ձեր բժշկական տեսակցություններին կամ թմրամիջոցների և ալկոհոլի բուժման հետ կապված խնդիրների հանդիպումներին, Medi-Cal ծրագիրը կարող է օգնել ձեզ տրանսպորտ գտնել:
Ոչ շտապ փոխադրումներ և ոչ բժշկական փոխադրումներ կարող են տրամադրվել Medi-Cal-ի այն շահառուների համար, ովքեր ի վիճակի չեն ինքնուրույն փոխադրում ապահովել և ունեն բժշկական անհրաժեշտություն՝ ստանալու Medi-Cal-ի որոշակի ապահովագրված ծառայություններ: Եթե փոխադրման հետ կապված օգնության կարիք ունեք, կապվեք ձեր կառավարվող խնամքի պլանի հետ տեղեկատվության և օգնության համար:

Եթե դուք ունեք Medi-Cal, բայց գրանցված չեք կառավարվող խնամքի պլանում, և ձեզ անհրաժեշտ է ոչ բժշկական փոխադրում, կարող եք կապվել ձեր Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի հետ օգնության համար: Երբ կապվեք փոխադրման ընկերության հետ, նրանք կխնդրեն տեղեկություններ ձեր տեսակցության օրվա և ժամի մասին: Եթե ձեզ անհրաժեշտ է ոչ շտապ բժշկական փոխադրում, ձեր մատակարարը կարող է նշանակել ոչ շտապ բժշկական փոխադրում և կապ հաստատել փոխադրման մատակարարի հետ՝ համակարգելու ձեր տեղափոխումը դեպի տեսակցության(ներ) վայր և հակառակը:

**Լրացուցիչ հատուկ տեղեկատվություն վարչաշրջանի մասին**

Տեղադրեք վարչաշրջանի մասին հատուկ տեղեկատվությունն այստեղ [եթե կա]:

## ԲԺՇԿԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ ԵՎ ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

### Ի՞նչ է բժշկական դիրքորոծում և լիազորագիրը

Դուք իրավունք ունեք ունենալ բժշկական դիրքորոշում և լիազորագիր: Բժշկական դիրքորոշում և լիազորագիրը գրավոր հրահանգ է ձեր առողջապահական խնամքի վերաբերյալ, որը ճանաչված է California-ի օրենքով: Այն ներառում է տեղեկատվություն, որը նշում է, թե ինչպես կցանկանայիք, որ ձեզ տրամադրվի առողջապահական խնամքը, կամ ասում, թե ինչ որոշումներ կցանկանայիք կայացնել, եթե կամ երբ չեք կարող ինքներդ խոսել:
Երբեմն կարող եք լսել, որ բժշկական դիրքորոշում և լիազորագիրը նկարագրվում է որպես [living will] կամ տևական, երկարաժամկետ լիազորագիր:

California-ի օրենքը բժշկական դիրքորոշում և լիազորագիրը սահմանում է որպես բանավոր կամ գրավոր առողջապահական խնամքի անհատական հրահանգ կամ լիազորագիր (գրավոր փաստաթուղթ, որը թույլ է տալիս որևէ մեկին որոշումներ կայացնել ձեր փոխարեն): Բոլոր Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանները պետք է ունենան բժշկական դիրքորոշման և լիազորագրի առկա քաղաքականություն: Ձեր Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի *վարչաշրջանը* պարտավոր է գրավոր տեղեկատվություն տրամադրել Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի բժշկական դիրքորոշման և լիազորագրի քաղաքականության վերաբերյալ և նահանգային օրենքի բացատրություն, եթե այդ տեղեկությունը պահանջվի: Եթե ցանկանում եք խնդրել տեղեկատվությունը, պետք է զանգահարեք ձեր Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանին լրացուցիչ տեղեկությունների համար:

Բժշկական դիրքորոշում և լիազորագիրը նախատեսված է թույլ տալու մարդկանց վերահսկողություն ունենալ իրենց բուժման վրա, հատկապես, երբ նրանք ի վիճակի չեն ցուցումներ տալ իրենց խնամքի վերաբերյալ: Դա իրավական

փաստաթուղթ է, որը թույլ է տալիս մարդկանց նախապես ասել, թե ինչ կցանկանային, եթե ի վիճակի չլինեն որոշումներ կայացնել իրենց առողջապահական խնամքի վերաբերյալ: Սա կարող է ներառել այնպիսի բաներ, ինչպիսիք են բժշկական բուժումն ընդունելու կամ մերժելու իրավունքը, վիրահատությունը կամ առողջապահական խնամքի այլ ընտրության կատարումը: California-ում, բժշկական դիրքորոշում և լիազորագիրը բաղկացած է երկու մասից՝

- Ներկայացուցչի ձեր նշանակումը (անձի), ով որոշումներ է ընդունում ձեր առողջապահական խնամքի մասին, և
- Ձեր անհատական առողջապահական խնամքի ցուցումները

Դուք կարող եք ստանալ բժշկական դիրքորոշման և լիազորագրի ձևաթուղթ ձեր Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանից կամ առցանց: California-ում դուք իրավունք ունեք բժշկական դիրքորոշման և լիազորագրի մասին հրահանգներ տալ ձեր բոլոր առողջապահական ծառայությունների մատակարարներին: Դուք նաև իրավունք ունեք փոխել կամ չեղարկել ձեր բժշկական դիրքորոշում և լիազորագիրը ցանկացած ժամանակ:

Եթե ունեք հարցեր California-ի օրենքի վերաբերյալ՝ կապված բժշկական դիրքորոշման և լիազորագրի պահանջների հետ, կարող եք ուղարկել նամակ՝

California-ի արդարադատության վարչություն
Ում՝ Public Inquiry Unit,
P. O. Box 944255
Sacramento, CA 94244-2550

**Լրացուցիչ հատուկ տեղեկատվություն վարչաշրջանի մասին**

Տեղադրեք վարչաշրջանի մասին հատուկ տեղեկատվությունն այստեղ [եթե կա]:

## ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Որո՞նք են իմ իրավունքները՝ որպես Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի ծառայություններ ստացող:**

Որպես Medi-Cal-ի համար իրավասու անձ և Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի ծրագրի վարչաշրջանում բնակվող՝ դուք իրավունք ունեք ստանալու բժշկական տեսանկյունից անհրաժեշտ հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման բուժման ծառայություններ Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանից:

Այս ծառայություններից օգտվելիս դուք իրավունք ունեք՝

- Որպեսզի ձեզ հարգանքով վերաբերվեն՝ պատշաճ կերպով հաշվի առնելով ձեր գաղտնիության իրավունքը, և ձեր բժշկական տեղեկատվության գաղտնիությունը պահպանելու անհրաժեշտությունը:
- Ստանալ տեղեկատվություն բուժման հասանելի տարբերակների և այլընտրանքների վերաբերյալ՝ ներկայացված շահառուի վիճակին և հասկանալու կարողությանը համապատասխան ձևով:
- Մասնակցել ձեր հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման խնամքի վերաբերյալ որոշումներին, ներառյալ բուժումից հրաժարվելու իրավունքը:
- Ժամանակին խնամքի հասանելիություն ստանալ, ներառյալ ծառայությունները, որոնք հասանելի են օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, երբ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է առողջությանը սպառնացող վիճակի կամ հրատապ կամ ճգնաժամային վիճակների բուժման համար:
- Ստանալ այս ձեռնարկի տեղեկատվությունը հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման բուժման ծառայությունների մասին, որոնք փոխհատուցվում են վարչաշրջանի Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի պլանի միջոցով, և Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի այլ պարտավորություններ և ձեր իրավունքները, ինչպես նկարագրված է այստեղ:

- Պաշտպանել ձեր առողջության մասին գաղտնի տեղեկատվությունը:
- Խնդրել և ստանալ ձեր բժշկական գրառումների պատճենը և խնդրել, որ դրանք փոփոխվեն կամ ուղղվեն անհրաժեշտության դեպքում:
- Ստանալ գրավոր նյութեր այլընտրանքային ձևաչափերով (ներառյալ Բրայլը, մեծ չափի տպագիր և աուդիո ձևաչափը) ըստ պահանջի և ժամանակին՝ պահանջվող ձևաչափին համապատասխան:
- Ստանալ գրավոր նյութեր այն լեզուներով, որոնք օգտագործում են ձեր Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի շահառուների առնվազն հինգ տոկոսը կամ 3000-ը, որն ավելի քիչ է:
- Ստանալ բանավոր թարգմանչական ծառայություններ ձեր նախընտրած լեզվով:
- Ստանալ հոգեմետ դեղերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարման բուժման ծառայություններ Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանից, որը հետևում է նահանգի հետ իր պայմանագրի պահանջներին ծառայությունների հասանելիության, համապատասխան հարմարությունների և ծառայությունների ապահովման, խնամքի համակարգման և շարունակականության առումով, ինչպես նաև ծառայությունների ֆինանսավորում ու թույլտվություն ապահովում:
- Մուտք գործել անչափահասների համաձայնության ծառայություններ, եթե անչափահաս եք:
- Ժամանակին մուտք գործել ցանցից դուրս բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայություններ, եթե պլանը չունի աշխատող կամ պայմանագրային մատակարար, ով կարող է մատուցել ծառայությունները: «Ցանցից դուրս մատակարար» նշանակում է մատակարար, որը չկա Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի մատակարարների ցանկում: Վարչաշրջանը պետք է համոզվի, որ ոչինչ չեք վճարում ցանցից դուրս մատակարարին այցելելու համար: Դուք կարող եք կապվել շահառուների ծառայությունների հետ *[վարչաշրջանը պետք է տեղադրի անվճար հեռախոսահամարը] հեռախոսահամարով՝

տեղեկություններ ստանալու համար, թե ինչպես ստանալ ծառայություններ ցանցից դուրս մատակարարից:

- Խնդրել երկրորդ կարծիք որակավորված առողջապահական խնամքի մասնագետից վարչաշրջանի ցանցի ներսում կամ դրանից դուրս՝ առանց ձեզ համար հավելյալ ծախսերի:
- Ներկայացնել  բանավոր կամ գրավոր դժգոհություններ կազմակերպության կամ ստացված խնամքի վերաբերյալ:
- Հայցել բողոքարկում բանավոր կամ գրավոր՝ նպաստի վերաբերյալ անբարենպաստ որոշման ծանուցագիրը ստանալուց հետո, ներառյալ տեղեկություններ այն հանգամանքների մասին, որոնց դեպքում հնարավոր է արագացված բողոքարկում:
- Հայցել նահանգային Medi-Cal-ի արդար լսումներ, ներառյալ տեղեկություններ այն հանգամանքների մասին, որոնց դեպքում հնարավոր է արագացված նահանգային արդար լսումներ:
- Ձերծ մնալ զսպվածության կամ մեկուսացման ցանկացած ձևից, որն օգտագործվում է որպես հարկադրանքի, կարգապահության, հարմարության կամ հատուցման միջոց:
- Ձերծ մնալ խտրականությունից՝ օգտվելու այս իրավունքներից առանց բացասաբար ներգործվելու, թե ինչպես է ձեզ վերաբերվում Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը, մատակարարները կամ նահանգը:

---

**Որո՞նք են իմ պարտականությունները՝ որպես  Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի ծառայություններ ստացող:**

Որպես  Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի  ծառայություններ ստացող՝ ձեր պարտականությունն է.

- Ուշադիր կարդալ շահառուներին տեղեկատվություն տրամադրող նյութերը, որոնք ստացել եք Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի

վարչաշրջանից: Այս նյութերը կօգնեն ձեզ հասկանալ, թե որ ծառայություններն են հասանելի և ինչպես բուժում ստանալ, եթե դրա կարիքն ունեք:

- Այցելել ձեր բուժմանը, ինչպես նախատեսված է: Դուք կունենաք լավագույն արդյունքը, եթե ձեր բուժման ընթացքում համագործակցեք ձեր մատակարարի հետ: Եթե ձեզ անհրաժեշտ է բաց թողնել տեսակցությունը, զանգահարեք ձեր մատակարարին առնվազն 24 ժամ առաջ և տեղափոխեք տեսակցությունը մեկ այլ օր և ժամ:
- Միշտ ունենալ ձեր Medi-Cal-ի (Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջան) նույնականացման քարտը և լուսանկարով անձը հաստատող փաստաթուղթը, երբ այցելում եք բուժմանը:
- Տեղեկացնել ձեր մատակարարին, եթե թարգմանչի կարիք ունեք՝ նախքան ձեզ տեսակցություն նշանակելը:
- Հայտնել ձեր մատակարարին ձեր առողջական բոլոր խնդիրների մասին: Որքան ավելի ամբողջական տեղեկատվություն տրամադրեք ձեր կարիքների մասին, այնքան ավելի հաջող կլինի ձեր բուժումը:
- Համոզվել, որ ձեր մատակարարին տվել եք ձեր ցանկացած հարցը: Շատ կարևոր է, որ դուք լիովին հասկանաք բուժման ընթացքում ստացած տեղեկատվությունը:
- Պատրաստ լինել ամուր աշխատանքային հարաբերություններ հաստատել այն մատակարարի հետ, որը բուժում է ձեզ:
- Կապվել Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի հետ, եթե ձեր ծառայությունների վերաբերյալ հարցեր ունեք կամ եթե մատակարարի հետ որևէ խնդիր ունեք, որոնք չեք կարողանում լուծել:
- Տեղեկացնել ձեր մատակարարին և Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանին, եթե ձեր անձնական տեղեկատվության մեջ որևէ փոփոխություն ունեք: Սա ներառում է ձեր հասցեն, հեռախոսահամարը և ցանկացած այլ բժշկական տեղեկատվություն, որը կարող է ազդել բուժմանը մասնակցելու ձեր կարողության վրա:

- Ձեզ բուժող անձնակազմին վերաբերվել հարգանքով և քաղաքավարությամբ:
- Եթե կասկածներ ունեք խարդախության կամ իրավախախտման մասին, խնդրում ենք հայտնել այդ մասին՝
    - Առողջապահական խնամքի ծառայությունների վարչությունը խնդրում է, որ բոլոր նրանք, ովքեր որևէ մեկին կասկածում են Medi-Cal-ի խարդախության, անօգուտ վատնման կամ չարաշահման մեջ, զանգահարեն Առողջապահական խնամքի ծառայությունների վարչության (DHCS) Medi-Cal-ի խարդախության հարցերով թեժ գիծ՝ **1-800-822-6222** հեռախոսահամարով: Եթե կարծում եք, որ սա շտապ օգնության իրավիճակ է, խնդրում ենք զանգահարել **911** անհապաղ օգնության համար: Զանգն անվճար է, և զանգահարողը կարող է անանուն մնալ:
    - Դուք կարող եք նաև հայտնել կասկածելի խարդախության կամ չարաշահման մասին էլփոստով՝ fraud@dhcs.ca.gov կամ օգտագործել առցանց տարբերակն այստեղ՝ http://www.dhcs.ca.gov/individuals/Pages/StopMedi-CalFraud.aspx:

**Լրացուցիչ հատուկ տեղեկատվություն վարչաշրջանի մասին**

Տեղադրեք վարչաշրջանի մասին հատուկ տեղեկատվությունն այստեղ [եթե կա]:

## ԽՆԱՄՔԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

**Ե՞րբ կարող եմ հայցել, որ պահեմ իմ նախկին և ներկայիս ցանցից դուրս մատակարարին:**

- Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանին միանալուց հետո դուք կարող եք հայցել, որպեսզի պահեք ձեր ցանցից դուրս մատակարարին, եթե՝
    - Նոր մատակարարի մոտ տեղափոխվելը լուրջ վնաս կհասցնի ձեր առողջությանը կամ կբարձրացնի հոսպիտալացման կամ ինստիտուցիոնալացման ռիսկը, և
    - Դուք բուժում էիք ստանում ցանցից դուրս մատակարարից մինչև Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջան ձեր խնամքի անցման ամսաթիվը:

**Ինչպե՞ս կարող եմ խնդրել, որ պահեմ իմ ցանցից դուրս մատակարարին:**

- Դուք, ձեր լիազորված ներկայացուցիչները կամ ձեր ներկայիս մատակարարը, կարող եք գրավոր խնդրանք ներկայացնել Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանին: Կարող եք նաև կապվել շահառուի ծառայությունների հետ՝ *[Վարչաշրջանը պետք է տեղադրի անվճար հեռախոսահամարը] հեռախոսահամարով՝ տեղեկատվություն ստանալու համար, թե ինչպես խնդրել ծառայություններ ցանցից դուրս մատակարարից:
- Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը կուղարկի ձեր խնդրանքը ստանալու գրավոր հաստատում և կսկսի մշակել ձեր խնդրանքը երեք (3) աշխատանքային օրվա ընթացքում:

**Ի՞նչ կլինի, եթե ես շարունակեմ օգտվել իմ ցանցից դուրս մատակարարի ծառայություններից Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջան անցնելուց հետո:**

- Ցանցից դուրս գտնվող մատակարարից դուք կարող եք պահանջել խնամքի փոփոխման հետադարձ հարցում ծառայություններ ստանալուց հետո երեսուն (30) օրացուցային օրվա ընթացքում:

**Ինչո՞ւ Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը կմերժի իմ խնամքի փոփոխման հարցումը**

- Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը կարող է մերժել ձեր նախկին, և այժմ ցանցից դուրս գտնվող մատակարարին պահելու ձեր խնդրանքը, եթե՝
    - Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը փաստաթղթերով հիմնավորել է մատակարարի հետ ունեցած խնամքի որակի խնդիրները:

**Ի՞նչ է պատահում, եթե խնամքի փոփոխման իմ հարցումը մերժվում է:**

- Եթե Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը մերժի ձեր խնամքի փոփոխման հարցումը, նա՝
    - Կտեղեկացնի ձեզ գրավոր կերպով,
    - Կառաջարկի ձեզ առնվազն մեկ ներցանցային այլընտրանքային մատակարար, որն առաջարկում է նույն մակարդակի ծառայություններ, ինչ ցանցից դուրս մատակարարը, և
    - Կտեղեկացնի ձեզ դժգոհություն ներկայացնելու ձեր իրավունքի մասին, եթե համաձայն չեք մերժման հետ:
- Եթե Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը առաջարկում է ձեզ մի քանի ներցանցային մատակարարի այլընտրանքներ, և դուք ընտրություն չեք կատարում, ապա Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը կուղարկի կամ կնշանակի ձեր ներցանցային մատակարարին և գրավոր կտեղեկացնի ձեզ այդ ուղղորդման կամ նշանակման մասին:

**Ի՞նչ տեղի կունենա, եթե խնամքի փոփոխման իմ հարցումը հաստատվի:**

- Ձեր խնամքի փոփոխման հարցման հաստատումից հետո յոթ (7) օրվա ընթացքում Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը ձեզ կտրամադրի՝
    - Հարցման հաստատումը
    - Խնամքի կազմակերպման փոփոխման տևողությունը
    - Գործընթացը, որը տեղի կունենա խնամքի շարունակական շրջանի ավարտին՝ ձեր խնամքը փոփոխելու համար, և
    - Ձեր իրավունքը՝ ցանկացած պահի ընտրելու այլ մատակարար Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանի մատակարարների ցանցից:

**Որքա՞ն արագ կմշակվի խնամքի փոփոխման իմ հարցումը:**

- Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը կավարտի ձեր խնամքի փոփոխման խնդրանքի վերանայումը երեսուն (30) օրացուցային օրվա ընթացքում սկսած այն օրվանից, երբ Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգը ստանա ձեր խնդրանքը:

**Ի՞նչ է պատահում իմ խնամքի փոփոխման ժամկետի ավարտին:**

- Drug Medi-Cal-ի կազմակերպված առաքման համակարգի վարչաշրջանը ձեզ գրավոր կերպով կտեղեկացնի խնամքի փոփոխման ժամկետի ավարտից երեսուն (30) օրացուցային օր առաջ այն գործընթացի մասին, որը տեղի կունենա ձեր խնամքը ցանցային մատակարարին փոխանցելու համար:

**Լրացուցիչ հատուկ տեղեկատվություն վարչաշրջանի մասին**

Տեղադրեք վարչաշրջանի մասին հատուկ տեղեկատվությունն այստեղ [եթե կա]: